

# Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35 ԴՊ ՏԱՐԻ

1886 ՅՈՒՆՈՒԱՐ 11

ԹԻԻ 3804

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 11 ՅՈՒՆՈՒԱՐ

Մ Ի Ս Ո Ւ Ս

Հ Ա Մ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԵՒ

ԼԵԻՈՆ ՄԵԾԱԳՈՐԾ

ՀԱՒԱՔԵԱԼ

Ի Զ. ՂԱԽՈՆԴԵԱՅ Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

ՅՈՒԻՏԵՆ ՄԻԹԱՐԱՅ

ՅԱՌԱԶԱԲԱՆ

(Շար. եւ վերջ)

Յորդադոյն եւս աղբերք քաղաքական  
գիտելեաց՝ աներկբայապէս իցեն Պատմիչը  
մեր ծանօթք, Մատթէոս Ուռհայեցի, Մի-  
խայէլ Ասորի, Սամուէլ Անեցի եւ Շարայա-  
րող նորին ժամանակագրութեան, Բաբուն  
Վահրամ վիպասանութեամբ՝ որ փանաքի  
ինչ է, եւ լաւագոյն՝ Սմբատ Գունդստապլ  
թէ եւ համառօտ, Հեթում Պատմիչ տէրն  
Կոնիկոսի, որոյ աշխարհածանօթ Պատմու-  
թիւնն թաթարաց կամ Արեւելից (338) հը-  
րատարակեալ ի փռանկ եւ լատին լեզուս՝ ոչ  
յայտնեցաւ ի հայունս, բայց միայն համա-  
ռօտ ժամանակագրութիւնն եւ նոյնպէս հա-  
մառօտ Պատմութիւն կամ Աղգարանութիւն  
Ռուբինեանց։ Այլ այսորիկ ամենայն ոչ յեր-  
կարօրէն ճառեն զՍիսուանեայցս եւ ոչ լիովին

ցվախճան։ Միին եւ յերկբայս մնայ բովան-  
դակ ժամանակն որ ի յետին ամաց Դ Լեւոնի  
եւ անդր։ միայն դէպք վերջնոյն (6) Լեւոնի  
եւ կատարած տէրութեանն՝ յայտնեցաւ  
յամս յայտոսիկ ի ժամանակագրութեանէ  
Փռանկ երկցու եւ յետոյ եպիսկոպոսի միոյ՝  
Յովհաննէս Տարբէլ անուանելոյ, որ եւ զա-  
ռաջնոց մերոց թագաւորաց եւ զպարոնայց  
Կիլիկիոյ առնէ յիշատակութիւն, այլ սղալ  
կամ թերուղիղ. սակայն զիարդ եւ քստ-  
ուական է գործն։ եւ որպէս ի սմանէ  
զվերջինսն՝ եւ զառաջնոցն մերոց յիշատակս  
քաղցի յայլոց փռանկ եւ լատին ժամանա-  
կագրաց եւ պատմաց, զորոց գրուածս  
հաւաքեալ հրատարակեն արդ ի Բարիզ  
անուամբ Պարֆէլ Խաչկրաց եւ Լաբի Աբե-  
ւելց, յարելով ի նոսին եւ զԱրեւելեան պատ-  
միչս նոցին իրաց՝ զՀայս, Յոյս եւ Արաբա-  
ցիս։ Ըղծալի էր յաւէտ եւ յազգայնոցս  
մերոց գտանել այսպիսի մանրապատում  
գրուածս։ — Ըստ մասին լցին զայս իղճ՝  
մատենը երկու ի յետին ամբս հասեալք  
ի ձեռս իմ, եւ մին մերձ յաւարտ տալա-  
գրութեան մատենիս։ առաջինն է նման  
Սմբատայն պատմութեան, յՈւռհայեցիոյն  
քաղուած առնելով եւ շարայարելով զգործս  
Ռուբինեանց մինչեւ ցերկրորդն Լեւոն,  
նոր եւ կարեւոր գիպաց յիշատակօք, զորս  
յեռեալ եմ ի կարգի Պատմութեանն Լե-  
ւոնի եւ ի տեղագրութեանս։ Անյայտ մնաց  
անուն հեղինակին, զի առաջին եւ վերջին  
թերթը մատենին գրելոյ ի վերջիոյս Ժ.Գ.  
դարու կամ ի սկիզբն Ժ.Ի.ն, որպէս եւ  
մասն ի միջոյն՝ անկեալ էին։ վասն որոյ ի  
կարգի բանիցս կոչեմ զսա Պարֆէլ Կիլիկիոյ  
կամ Արփոնի Պարֆէլ, եւ կամ սոսկ Պարֆէլ  
Քր։ Անանուն մնայ եւ երկրորդին հեղի-



նակ, այլ միայն վկայէ զանձնէն լինել երէց Երեքսորան եկեղեցւոյ Սոյ՝ 'ի կէս Ժէ դարու . եւ է ժամանակագրութիւն կամ տարէգրութիւն՝ ոճով Ուռհայեցւոյն, քաղելով յայլեւայլ պատմչաց, որպիսիք են Միխայէլ, Վարդան, Կիրակոս, եւ առաւել՝ Սամուէլ Անեցի եւ շարայարողը նորին, եւ այլք անծանօթք, եւ յիշատակարանք գրոց. ըստ այլեւայլ հեղինակացն՝ այլայլի եւ ոճ շարագրութեանն եւ յանգի 'ի ռամկականն . բազմապէս է եւ գրութիւնն . իսկ կարգ պատմութեանն հասանէ մինչեւ 'ի սկիզբն Ժէ դարու, եւ յայտնէ ոչ սակաւ նոր եւ պիտանի գիտելիս, մանաւանդ զվերջնոյ (Գ) Կոստանդնէ, եւ որ ինչ յետ բարձման Թագաւորութեանն, բայց ոչ յիշէ զօրինակ բարձմանն, եւ բնաւ ոչ զԼիւզինեանս . Ժամանակէր Կէլիկոն կոչեցի զսա 'ի Յաւել-ասթին :

Ակնարկեցի 'ի վեր անդր՝ զի յընթացս հիսուածոյ Տեղագրութեանս՝ ծնաւ յիս խորհուրդ գրեւոյ ուրոյն զգործոց Լեւոնի Մեծի, եւ առ անթերի զնոյն բովանդակել, հարկ եղեւ երբեմն երկրորդել զնախագրեալս 'ի Դրուագի երկրակալութեան Ռուբինեանց . այսպէս եւ այլոք՝ մերթ պատմական եւ մերթ աշխարհագրական հարկ ստիպեաց 'ի կրկնութիւն . իցէ ուրեք եւ առ մուացութեան զայս արարեալ, որոց ներողամտս յուսամ զհայրենասէրս, նոյնպէս եւ սակաւ այլեւայլ օրինակաւ գրեւոյ զանուանս ինչ, որք բազմազոյն եւս օրինակօք այլայլեալ դտանին առ նախնիս, եւ ի յիշատակել իմում զբանս նոցա՝ ըստ նոցին տառից աւանդեալ եւմ զուղիղ եւ զսղալ . իսկ յիմ գրուածս՝ յետինքն եւ որ 'ի ցանկս, ընտրելիք են . — Արժան է ինձ յիշեցուցանել (մինչ զԼեւոնէ եւ բանքս) եւ զայս, զի սա Երեքսոր կոչի սովորաբար 'ի դասագիրս եւ 'ի նմանիս, այլ ես Առաջին կոչեմ (իւրեւ Թագաւոր), ըստ հնագոյն պատմաց եւ ժամանակագրաց, որք միշտ երկրորդ գրեն զօրդին Ա. Հեթմոյ, Երրորդ՝ զԹուռն երկրորդին՝ զօրդին Թորոսի . Զօրրորդ՝ զօրդի եղբօր սորին՝ Օշնի . ապա՝ ուրեմն վերջինն Լեւոն Լիւզինեան՝ Հինգերորդ է եւ ոչ Վեցերորդ, եւ այնպէս արժան է արոհել եւ ընթեռնուել զլատին տապանադիր նորին, եւ ոչ որպէս ընթեռնոյր եւ իմանայր Լանկ-

լուա եւ այլք . որպէս Թէ Լեւոնդ այդ եղեալ իցէ Հինգերորդ Լաթին Բաթաոր Հայոց (1) քանզի յառաջ քան զնա մի ոք միայն յայնմ սեռէ Թագաւորեաց, հօրեղբայր նորին՝ Կի, իսկ հայրն՝ Ջուան՝ պայլ Թագաւորութեան եկաց եւ ոչ Թագաւոր . Զազգաբանութիւն սոցա (Լիւզինեանց) ստուգեալ 'ի Տարտելէ եւ 'ի մերայոց՝ յարեցի յԱղթաշոյն Հեթմոյ, յոր եւ յօդեալ իսկ էին 'ի մայրենի բնէ՝ 'ի Զապուռնէ՝ դստերէ Բ Լեւոնի :

Յիշատակ այսր բանի առաջնորդէ ինձ ազդ առնել վասն Ազգացուցակ պատկերիս համօրէն Հեթմեան տոհմի, զի յերկուրեցաւ ըստ աւանդութեանց մերոց պատմաց եւ տարէգրութեանց Մաղաքիայ Դըսուրի, եւ ըստ Աղթաշոյն Անդաշոյն (Famille d'Outre-mer), գործ փոսակ գրչի, զոր յեղեալ է 'ի հայ եւ մերս Հեթմոմ պատմիչ . առ 'ի դիւրահասու լինել իւրաքանչիւր ազգաց կամ ծննդոց՝ դիպողագոյն վարկայ զայս ձեւ շրջանակաց (Ա — ԺԲ), որովք զատուցանին հարք յորդուոց, եւ նշանակին սորա շառաւեղօք կամ գծովք, եւ որ դիտեն՝ իմասցի, զի յորմէ գիծն ելանէ ուղղակի կամ ընդ մէջ անցանելով նա ծնող է այնր՝ առ որ անցանէ գիծն սլաքածայր կամ անսլաք (2) : Զափ կամ անձ-

(1) Cy gist le très noble et excellent prince Lyon de Lizingne Quint, Roy Latin du royaume d'Arménie, եւ ոչ Lyon de Le izingne, Quint Roy, etc. — Բայց ոչ կամիմ զանց առնել 'ի յիշելոյ, զի ոմանք 'ի ժամանակագրաց համարին ընդ մէջ Բ եւ Գ կոստանդնեայց՝ Թագաւորեալ կամ բռնաբարեալ զԹագն՝ այլոյ եւ անծանօթի ուրումն Լեւոնի . ապա յայն ցարդ ոչ երեւեցու վաւերական ծանօթութիւն կամ յիշատակարան ինչ յանուն սորին :

(2) Ախալեալ է սակաւ ուրեք վիմագրողին 'ի գիծնս . օրինակ իմն, յ'ի շրջանակի՝ երկու գիծք սլաքաւորք ձգեալ են 'ի Վասիլ՝ որդի Կոստանդնի Պայլի . յայտ է զի մին աւելորդ է, եւ զի՝ ոչ էր պարտ հպեցուցանել 'ի նոյն զշառաւեղնն՝ որ յեղբօրէ նորա՝ Լիկոսէ, ելանեն եւ ձգին 'ի չորեսին որդին՝ յ'ի շրջանակին . — Յ, Ժ. շրջանակի տեսանի մի գիծ ձգեալ յՕշնի եւ յԱլինախ արքայորդիս, քանզի արքանդակից երկուորեակք են, որպէս եւ յայլ երկու զոյգ եղբարս կամքորս նոցին . բայց միւս գիծն՝ որ Ալինախէ ձգի 'ի միւս Ալինախ սխալ է, հարկ էր յեղբօրէ նորին յՕշնի արքայէ ձգել զի սորա՝ որդիք են յԱլինախն այն վաղամեռիկ եւ Լեւոն Գ, նշանակեալ 'ի Ժ. շրջանակի . — Վրիպեալ է ուրեք եւ յերանգս գունոց, որովք կամեցայ որոշել զտոհմն եւ



կուժիւն չըջանակացն՝ ոչ ներեաց յաւելուել եւ զանուանս կանանց Հեթմեան սերնդոց, այլ որք կամիցին գիտել՝ դոցեն նշանակեալ այլուր (544-5): Ոսկէդոյն միջադիծն ցուցանէ զուղղակի կամ զանդրանկածին ազգասերունդն, որ 'ի Հեթմոյ նահապետէ ցՀեթում որդի Դ Լեւոնի՝ լինի ազգ մետասան:

Ի պատկերէ աստի անցանելով 'ի ծանօթութիւն այլոցն եւս, նախ յանդիման լիցի Բաւարացի (յէջ 17), զորմէ աւանդեալ է 'ի կարգի բնագրութեանս. իսկ աստանօր յաւելից ասել կամ կրկնել, զի որքան ցամաք եւ բազմաց անձաշակ իցէ անուանակարգութիւն Բուսաբանութեան Սիսուանայ, մարթ է վնոյն ստուգադոյն մասն ասել բնական գիտելեաց երկրին, զի արանց հմտից ըննեալ է եւ դասակարգեալ. իսկ հայերէն անուանքն, որպէս եւ նշանակեալ եմ անդ, է ինչ որ ըստ նախնեաց են, եւ այնպէս համարեցայ պատշաճել, եւ է որ լոկ տառադարձութեամբ կամ թարգմանութեամբ յոյն եւ լատին բառիցն եւ իմաստից, եւ ոչ այլոց լեզուաց. եւ այս ամենայն համարեցի իմովսանն 'ի պէտս սյոր մատենի եւ ոչ առ հասարակաց ընծայութիւն. զի գործ ծանր է եւ բազում ըննութեանց կարօտ՝ զայսպիսիս ճշդել եւ ճշգրտել, թող թէ օրինադրել: Յուշ արարից եւ զայս, զի զմանս 'ի յառաջագոյն թարգմանելոցս անուանց՝ ուղղեալ կամ փոխեալ եմ յետոյ, եւ ըստ այնմ կարգեալ 'ի վերջ գրոցս, ըստ բնական կարգի լատին անուանցն: Գիտուն լիցի՝ եւ վասն պատկերացն ինչ բուսոց եւ ծաղկանց, զի ոչ անընտրողաբար զազգ ինչ նոցին կերպարանեն, այլ զբուն զայն տեսակ՝ զոր ի Կիրիկիա տեսեալ եւ գծագրեալ է գիտնոց ոմանց:

Պիտանեգոյն եւ ցանկալի եւս էր անանչուշտ Աշխարհացոյց քարտն Սիսուանայ

զտեսարս պայազատս այս կամ այն վիճակաց կամ պաշտամանց. որպէս, յ'ի շրջանակի պարտ էր բացագոյն կարմիր լինել յատակի անուան երկրորդն Սմբատայ դուռնգատապի՝ թողն մեծին Սմբատայ, զի այն գոյն սեփականեալ գրեցաւ տոհմին Գունգըստապլեանց. 'ի դէպ էր եւ շառաւելին ուղղագոյն ելանել 'ի Սմբատայ եւ անցանել 'ի դուռնգուր Մարիւն 'ի Ժ. շրջանակի:

կամ Հայակիրիկիոյ, յորում՝ ըստ հաւանագոյն կարծեաց՝ նշանակեցի զկողմանս գաւառաց եւ վիճակաց ժամանակի տէրութեան Ռուբինեանց, որչափ ինչ գտի առ պատմիչս, բայց ոչ ուրեք ոճով եւ բովանդակ աւանդեալ: Բանի՝ ըզմալի էր հաւաստել եւ զգիրս եւ նշմարս նախայիշեալ երկրիւրոց եւ աւելի եւս բերդից, դղեկաց, աւանաց եւ վանորէից, այլ եւ զգիւղից հայանուանց. զԲերդորէիցն, որք՝ եթէ օրէն իցէ ասել, տաճէին եւ արծարծէին զմարմին պետութեան Սիսուանայ, ընդ նմին եւ զկորով հինաւուրց Հայկազանց, զիորձ եւ զճաշակ նետից քաջաձգացն այնոցիկ եւ քաջաձիոց հարանց աղեղնաւորաց. ո՞ տայր եւ զգաղտնիս անդ գործեցելոցն եւ գրելոց՝ յայտնել. — եւ զՎանօրէից, որք անշիջատոչոր վառարանք եղեն աղօթանուէր հոգւոց եւ բանասէր մտաց, ցնցուղը սրբամաքուր սիրոյ, եւ շրջապիւռ ճաճանչք իմաստից, յորոց կայծակունտ տակաւին հըրձուիմք եւ ջեռնումք եւ մեք՝ հնգեքումք եւ վեցեքումք սառնեղէն դարուք վերջացեալս. եւ ոչ գարչիմք (եթէ միայն գտեալ էր) համբուրել զսեամս զոր կոխեցին, եւ զսեմեակս յոր մենացան խոկացին եւ գրեցին՝ Լամբրունեցիքն լուսաւորք, Սկեւռացիք իմաստայեցք, Մաշիկուրք հմուտք, Դրազարկք կարգապահք եւ հսկողք 'ի վերայ թագաւորական հանդոտարանաց, եւ համեմիչքն հոգւոց երգահան Սրբայկաղնեցիք. վասն այնորիկ եւ ոչ խորչեցայ, մանաւանդ թէ եւ ախորժեցի յերկարել զբանասիրական ծանօթութիւնս, կամ որ ինչ հայկական դպրութեան պատշաճէր՝ 'ի ստորագրեալ տեղիսն եւ յտնձինս. քանզի զի՞նչ քան զմտաւորն եւ զհոգեւոր՝ գուցէ գեղադոյն գովելի եւ ճառելի: Այլ ո՞ տայր ինձ զարթուցանել զայնպիսի խոհարանաց եւ դրանաց զարձագանդս, զպատրաստականսն երբեմն յառժամայն կրկնումն եւ բեկբեկումն վանդից երգոց եւ տաղից՝ յանկիւնս քարանձաւաց լերանց անսպառն Տաւրոսի, ուր արդ միայն հողմն հոմաձայն հնչէ վայրապար մոլեալ 'ի մայրիս ծերացեալս եւ մանկացեալս..... Եթէ անծանօթ առ 'ի մէնջ միան այսպիսեաց վայրաց դիրք, չեն ամենեւի 'բ աներկբայք եւ նշանակեալս 'ի քարտին, բաց 'ի ծովեզերեայն եւ քաղաքաց



ոմանց • քանզի մինչեւ ցարդ չէ արարեալ յերկրի անդ ուսումնական կամ եռանկիւնական չափողութիւն, եւ մարթ է ստոյգ ըննութեան՝ հիմնովին տեղափոխել զհսկայածեւ լերինսն անգամ, եւ այլածեւել զսահմանսն Կիլիկիոյ • Երկրայականք են եւ յողովից նորոց անուանց հնչմունք կամ գրութիւնք, պէսպէս եւ անհեթեթս ծռեալք եւ ծեքեալք յԵւրոպէացւոց, որոց՝ յայսմ մասին (յսողութեան արեւելեան անուանց) յոյժ ծանրալուր եւ խօթ են ականջք • վասն որոյ և ուրեք ուրեք հարկ եղեւ զտարակուսանաց նշանն (?) կարգել առ նոքօք • եւ ուրեք եւս իսպառ զանց առնել զանուամբքն • այսպէս եւ զորոյիչ գծովք սահմանաց գաւառաց եւ վիճակաց, զի հինքն անծանօթք են, նորքն՝ կիսածանօթք եւ ոչ պիտանիք իմս դիտման • իսկ զընդհանուր սահման Կիլիկիոյ՝ ընդարձակագոյնս ձգեցի, ըստ ժամանակի աշխարհակալութեան Մեծին Լեւոնի • մարթ էր անդրագոյնս եւս տանել ընդ հիւսիսի՝ ի վերնահովիտս զուգառաջն Սարոսի, այսինքն Մամանդեայ եւ Սառանայ, զորս ոչ պարագրէ չափ քարախիս, եւ որք դուռն երբեք նուաճեցան ի մերայոցս, որպէս եւ Մարաշ, զոր եւ ոչ իսկ ստորագրեցի, քանզի սեփական է Գերմանիկոյ աշխարհի •

Ընդ քարտիցս այսոցիկ եւ տախտակաց գտցին ի բազում օրինակս մատենիս եւ պատկերք ինչ գունագոյն երանգօք նմանագրեալք ի ձեռագիր մատենից • որպէս, Խորան մի Լամբրունեան կամ Սկեւռեան աւետարանի (83) գրելոյ յամի 1192 • Պապիէր Յովհանն • Աւգոստինոս եւ Զարքա նկարագրեալք ի Պիծակ Սարգսէ՝ յամի 1331 • նորին դարձեալ ի նմին ամի Պապիէր Դ Լեւոնի բազմելոյ յատեան դատաստանի (481), յորս է տեսանել եւ զտարազս ինչ զգեստուց ազգայնոց ժամանակին • — Պապիէր յեռաբի Սիսուանայ (487), եւ Մեծագործն Լեւոնի ի միջի հոյակապ տիրապետաց իւր իւր առնչացելոց նմին (455) • — Են եւ երկու արեւատիպ պատկերք, Հեթոյ Պապիէր ընծայութեան գրոցն առ քահանայապետն Կիւմէս Ե՝ յԱւենիոն Փռանկաց (340), եւ Այսոյ աղաթոնիւն (391) • Դարձեալ, ճշգրտատիպ պատճէն Պարգեւագրի Բ Լեւոնի առ Գենուացիս (388), Պայմանագիր

Կոստանդնի Տեառն Սարուանդիքարի առ Տեւտոնեան ասպետս (210), եւ հաւասարն Արշակունիւն Դեղիսի (273) • Առանձինն ինչ գիտելիք միոյ միոյ ի պատկերացս՝ աւանդեալ են յիւրաքանչիւր կարգի բանից, ըստ նշանակեալ իջից մատենիս •

Յետ զայս ամենայն ծանուցանելոյ հասարակաց հանդիպելոց գրոցս այսմիկ, մնան ինձ պարտք անուշակք հրատարակել եւ շնորհս եւ երախտիս՝ որոց միանգամ պէս պէս օրինակօք նիւթականաւ կամ ուսումնական՝ օժանդակեցին ի հիւսուած եւ ի հրատարակութիւն սորին, եթէ ազգայինք եւ եթէ օտարք • Ի յետնոցս՝ նախակարգեմ զաշխարհածանօթ աշխարհագիրն Քէքերթ (H. Kiepert) գերմանացի, որ յանձն էառ մարդասիրապէս զիւր ձեռագիր՝ քարտ մի Կիլիկիոյ՝ եռապատիկ մեծ քան զվիմագրեալ  $\left[\frac{1}{400,000}\right]$  ընձեռել ինձ • — ուղէկիցքն Ֆավր (C. Favre) և Մանդրոտ (B. Mandrot), վերջին ըննողք Կիլիկիոյ, մինչև ի նքնին հրատարակեալ ետուն ինձ պատկերս լուսագրեալս զՍոյ եւ զայլոց ինչ բերդից, որպէս նշանակեալ եմ ի կարգի նոցին տեղագրութեան • — հմուտ եւ ազնիւ կոմս Ռիան (P. Ed. Comte Riant) ուղղեալ Ընկերութեան Լատին Արեւելից, որ զխնդիրս իմ եւ զհարցուածս անդանդաղ ընդր, եւ ինքնայօժար պարգեւէր զպատուական հատորս Դիւանաց այնր ընկերութեան եւ զիւրոց երկասիրութեանց • — նորին ընկերութեան եւ շնագիտաց կաճառոյն կցորդ, հետաքննողն փռանկ կամ լատին իշխանութեանց եւ գաղթականաց յարեւելս՝ Պ. Ռեյ (E. Rey), զիւրոց համանման գրուածոց օրինակս՝ ընդ հրատարակելն եւ առաքէր • — Ժաքոն կամ Ջեյքոն, (J. Jackson) քարտուղար Աշխարհագրական Ընկերութեան Բարիդու, բարեսիրապէս փութայր ծանուցանել ինձ զնոր կամ զհին հրատարակեալ գրեան պիտանի վասն իմոյ գործոյս • — Երեսայր Պասսիէ (Ed. Boissier) բուսաբան, որ մեկնեաց եւ ծանոյց ինձ զանուանս բուսոց եւ բուսաբանից ոմանց • — իսկ ի մերձաւորաց ազգայնոց՝ որք նիւթականաւ սատարեցին ի պատրաստութիւն պատկերաց եւ ի տպագրութիւն մատենիս, առաջին որպէս եւ



յայլ բազում աղգային օժանդակութիւնս, եղեւ ծանօթ բարերարն՝ Պ. ՄԿՐՏԻՉ ՍԱՆՍԱՐԵԱՆ, պարգեւելով 1000 Փրանք, եւ այլ եւս հաղար՝ ի գին տպագրեալ օրինակաց մատենիս, որք եւ առաքեսցին նմա իսկոյն. — Պ. ՅՈՎՍԷՓ ԻԶՄԻՐԼԵԱՆ, միւս եւս օժանդակ գրադիտաց, սակաւօր յառաջ քան զվախճանն՝ պարգեւեաց 500 Փրանք. — սոցին համարնակ եւ համամիտ բանասէրն Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆ խորհրդակից եղեւ սատարել՝ գնելով ոչ սակաւ մատենան տպագրեալս ի վնաս մեր: Ընդ սոսին հաճոյագոյն է ինձ յիշել եւ զլուսնայն առաւելեալ սիրով քան քանակաւ՝ զհանգանակեալն յոմանց աշակերտելոցն ինձ երբեմն ի Ռափայէլեան եւ ի Մուրատեան վարժարանս: — Ճանաչողք հանգամանաց տպագրութեան և մատենիս այսորիկ՝ ի վերայ հասանին, զի այս ամենայն նպատակաւ ինչ մասն է պահանջեալ ծախուցն, զորոյ ծանրութիւնն ստանձնեաց Ուխտս յընկճիչ նպահու (\*), յուսով ոչ անխորի եւ անպէտ մնալոյ մատենիս, այլ առաւել եւս՝ հայրենասէր եւ որդեսէր զթով, զոր սըրբագոյն եւ անուշագոյն պարտս գիտեմ եւ ես՝ կրել եւ գրել. նոյնպէս եւ զամենայն խնամս ձեռնտուացն ինձ՝ Հօր եւ Եղբարց, յընդօրինակութիւնս, ի սրբագրութիւն, ի տպագրութիւն եւ ի յօրինուածս ցանկի, եւ որ այլն եւս:

Եթէ այլ իմն օրինակ՝ այլ ոչ նուազ քաղցր եւ դիւր է սրտի՝ յայտնել զսատարութիւն երկուց եւս ազգայնոց. մի այն՝ զոր յայտնեաց վաղ ուրեմն Տեղացոյց բարտն Շիրակայ, երբեմն իմ աշակերտ եւ այժմ բարեկամ բարեյօզ, ՅԱԿՈՎԲ ՏԱՄԱՏ. որ եւ ի պէտս այսր մատենի՝ աղգ աղգ մատոյց սպաս, գնիւք ծանրագին գրոց, նըկարելով զվերոյիշեալ պատկեր առմանն Այսոյ, լուսագրութեամբ պատկերաց Հեթմոյ Պատմչի, եւ իւրով եւ վարձաւոր ձեւամբ ընդօրինակելով ի գրչագիր եւ ի տպագիր մատենից մեծի գրատանն Բարի-

զու՝ երկար բանս. որովք եւ առաւելեալ քան թէ նուազ գտանի եւ ի սատարողն նիւթականաւ: — Միւսն՝ մերձաւորագոյն եւս ինձ՝ որչափ մարթ էր լինել ի վերայ երկրի, որ լով ՀԱՅ ՀՆԱՀԱԽԱՔ անուամբ կամեցաւ ծանօթանալ ի մատենիս, գերագոյն՝ որպէս սիրելութեամբն՝ եւ բանաւոր սատարութեամբն գտաւ, մատակարարելով զտիպս եւ երբեմն զիսկական իսկ հին դրամս զմերոց Սիսուանեայց եւ զօտարաց, որոց պատկերք տեսանին յաճախօրէն ի տեղագրութեան Ծովայնոյն Կիլիկիոյ. այլ ի վեր քան զամենայն եւ բնաւից պիտանեգոյն՝ ընձեռելով զերկոսին նախայիշեալ սովերս եւ աղբերս բանից, զՊարթիւ եւ զԺամանակագրի Կիլիկիոյ, յորոց թէ որքան օգտեցայ ի տեղագրութեանս եւ ի պատմագրութեան՝ կանխաւ եւս ծանուցի. եւ ըստ այնմ կշեռեսցին արդիւնք նորին եւ անխնայ նախանձ ի խոյզ եւ ի խնդիր Հայկական յիշատակաց՝ ըստ ընդարոյս հօրամոյն բարուցն:.....

Յետինս այս յիշատակ հրապուրէ զիս ի վեր եւս երանել կամ թէ ի վայր եւս իջանել, յաւուրս իմ առաջինս. եւ ի լրումն ծանօթութեան սատարչաց եւ սիրողաց Սիսուանայ եւ նշխարաց նորին հաւաքողաց՝ յիշել զերկցագոյնն ի մերազնեայս, եւ որ սիրով նորին ի Հեթում անուն կնքեալ էր զմի յորդուոցն. եւ մինչեւ ուրեք էր յայտնեալ Ռուբինեան ոսկի դըրամոյ, գտեալ նորա զմիակն ցարդ ծանուցեալ ոսկի Կոստանդնի, զմակագրեալն Սոյ Բերքէ Ե Բաբուր (216), զնոյն՝ տարօրինակ իմն կամ եթէ հաճոյ թուիցի՝ տարապայման դիպուածով (զոր ստիպիմ յայտնել), իբրեւ անզուգական գտնձ ի գրապանակին կրելով, եւ ոչ ուրուք գիտելով, նովմբ յետ վախճանին դիտալատիկ եղեալ յուզարկիւր ի հանդիստ հօղոյ. յորում յետ հրաժարելոյ յուզարկաւորացն՝ դիտալիս ըստ յուսոյ կրկտելով՝ գտանէ յանկարծ եւ յանպուրժ պահարանին զդահեկանն այն, եւ իբրեւ ի գաղտ դարանաց մահու եւ տապանի թափելով, բերէ հաւատարիմ մտք առ քահանայն հանդիսապետ յետին հանգիսին, (յետոյ առաջնորդ Ուխտիս մերոյ՝ Տէր Գէորգ Հիւրմիւզեան) եւ սորա նոյնպէս տարեալ առ անդրանիկ

(\*) ի յիշատակ տպագրչից՝ ոչ անձահ համարիմ նշանակել եւ զայս, զի սկիզբն գրաշարութեան գործոյս եղեւ յ'9 յուլիսի 1883 ամի, եւ յետ աւուրց ինչ, (այն է ի 14 նորին ամսոյ) հանդիպեցաւ արկած հրդեհի վանացս:



հանդուգեղյն, ընդունի 'ի նմանէ զնոյն ոսկի' 'ի պարգեւի մասին եւ 'ի մաղթանս հոգւոյ . եւ պահի արդ 'ի թանգարանի վանացս : Աստանօր երկամու յառաջ քան զայն դիպուած՝ վիճակեալ եւ ինձ աշակերտիլ եւ յօղանալ, եւ արդ այժմիկ յետ յոբելինի ամաց, իբրեւ 'ի տարերս ընդարոյս հայրենական ասորժակաց՝ ծծեալս 'ի նմանէ եւ 'ի սեղանոյ նորին հաւաքածոյ հընութեանց, յեռեալ զայս պրտկ հայրենաձառ տառից, ըզճացայ նմին ինքեան առատօղին ինձ կենաց՝ յերեկոյացեալս պահու' (նորին կենդանադրաւ սկզբնազարդեալ), ձօնել եւ վերագրել . զմեծ նորայն սիրելութիւն Սիսուանայ դիտելովք քան զարեան եւ զբնութեան . եւ այսու՝ վարկանիս ամենեցուն իսկ համագգեացս հայրենասիրաց նուիրել զայս վաստակ, զայս խայրի անաշանի . եւ փոխարէն, յետ ներողամտութեան խնդրեմ' (եթէ ժողիւմ եւ յայս) յորոց ունիցինն, ընծայել 'ի լոյս' որոյ եւ է ձեռօք, զորպիսի եւ է յիշատակարան եւ ծանօթութիւն՝ յաւելիչ աւանդելոցս 'ի մատենիս, որովք՝ համարիմ մէն մի հանգոյցս լուծանել յառեղծութեանց եւսագարեան տեւողութեան վերջին հարստութեան Հայկազնեայցս 'ի Սիսուան . համարեցին եւ ինքեանք առնել զայս շնորհ՝ նախ ինքեանց իսկ, եւ ապա իւրեանց ազգակցաց եւ ապագայից, բան թէ թելադրողիս, որ այսուհետեւ խոնարհի համբուրել զանըզբաղասէրն լուութիւն :

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՕՐԱԳԻՐ

ԵՒ

### ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շար. 3802 թուէն)

Անգլիական կամ աւելի ճիշդը խօսելով անգլո-ամերիկեան լրագրոց թուական առաւելութիւնը ցոյց տրուեցաւ նախընթաց հատուածին վերջը . այլ իրական գերազան-

ցութիւնն այնքան զգալի է ուրիշ լրագրութեանց վրայ՝ որ շատ հրատարակիչներու համար ուսումնասիրելու հետաքրքրական նիւթ մը եղած ըլլալով, թերեւս անտեղի չ'երեւի մեր ընթերցողաց որ մեր շարունակած տեսութեան ընդարձակագոյն մասն անոր նուիրենք : Պետութիւն պետութեան մէջ : Երկուք են յԱնգլիա . մին Գլեյբըրը, միւսը մամուլը կամ լրագիրը : Գլեյբըրը բան մը չեն եթէ լրագրութիւնը չ'օգնէր անոնց . մամուլը Անգլիոյ համար միայն Գրդ պետութիւնը չէ, — թագուհին եւ երկու խորհրդարանները, — այլ առաջինն է . զի սա է որ կը վարէ զԱնգլիա : Տէյթ Թելեգրաֆը Ա. նախարարի մը չափ, Կլապթոնի մը չափ, իսկ Թայմը Խորհրդարանէն աւելի զօրաւոր է :

Օրէնսդրական ձեռներեցութիւն մը ունի մամուլը եւ իրեն կ'անսան Խորհրդարանը : Նա է որ կը հսկէ պաշտօնատանց վրայ եւ գրեթէ պաշտօնէից գործը կը կատարէ : Լաւագոյն դեպքանէ երկրին եւ Ազգային աւագ Հաւատարմանի՝ ի մականունը տրուած է անոր : Մի տեսակ հանրային ատեան են լրագիրը, կամ ժողովրդական խորհրդարան . դատարան մ'ուր ամէն խնդիր կը քննուին, քաղաքականութիւն, բարոյք, կրօնք, ճաշակ, նորութիւն եւ : Ասկէ զատ, իւր մեծագոյն գործերէն մին է ծանուցումները (\*) որք անգլիական կեանքին մէջ գլխաւոր դեր մը կը կատարեն :

Անգլիական մամուլն գերիշխանութիւնը մի քանի պատճառներէ կը բղխի . նախ կուսակցական թերթերն անհետացած են . քիչ շատ արժէք ունեցող թերթերը գնուած են

(\*) Առաւօտեան լրագիր մը, օրինակի համար «Թայմը» 8 էջ ունի մեծագիր մէն մի էջ 6 սիւն . արդէն 48 սիւնով լրագիր մը ուրիշ տեղերու մեծ թերթերուն կրկինն ըսել է, առանց հաշուելու որ անգլիական թերթերու տառերը աւելի նուրբ են եւ շարքը աւելի խիտ : Երբեմն պէտք կ'ըլլայ 8 էն 42 էջ ծանուցում տպել իբրեւ յաւելում, որոնք բուն լրագրին 42 սիւն ծանուցումներուն հետ կուտան 60 էն մինչեւ 80 սիւն ծանուցում մէն մի սիւն 300 տող պիտի ընէ 18 էն 20 հազար տող ծանուցում : Դիտելու է որ երկարագոյն ծանուցումը 10-12 տողէն աւելիչէ եւ այնքան լաւ կարգադրուած է անգլիական լրագիրներու ծանուցմանց մասը որ ընթերցողը այն նուրբ գրերու ծովին մէջ իսկոյն իւր ուզածը կ'է գտնէ :



ընկերութիւններէ եւ չեն պատկանիր ուղղակի այս կամ այն պաշտօնէին, երեսփոխանին կամ խորհրդարանական խմբին: Ունին իրենց գոյնը, բայց զխտովին անկախ են: Հոս է իրենց բուն զօրութիւնը, եւ աղորապացոյց՝ յօգուածներու ներքեւ ստորագրութեանց բացակայութիւնն է:

Բարձր դիրք մը գտած է անգլիական մամուլն իւր պատուաւորութեամբ, եւ իրաւունք ունի յարգանաց: Լրագրապետը նշանաւոր մարդիկ են. իրենց ընթերցողաց գիտեն բացարձակ վստահութիւն ազդեւ եւ չեն ստորնացներ զիրար ցաւալի յարձակումներով: Լրագրապետներու մէջ անձնականութեան խնդիրներ եւ մենամարտ անծանօթ են: Աշխարհիս ամէն կողմը անգլիական մամուլն ունի թղթակիցներ, եւ ասոնց միջոցաւ պաշտօնեաներէն յառաջ եւ խկոյն կրկնապ ամէն բան. պաշտօնեաները կրնան անկատար տեղեկութիւններ ունենալ զի իրենց դեսպանը տգէտ կրնան ըլլալ կամ խաբուիլ կամ ազդեցութեան ներքեւ գործել, բայց անգլիական մամուլը ո՛չ: Նա՛ մեծ դաղափարները ձեռք կ'առնու եւ բարձրօրէն կը ճառէ անոնց վրայ. Ժողովուրդին կուտայ ընդգրկել զայնս, եւ օրէնսդիրներուն՝ արդիւնագործել: Կարեւորագոյն բարենորոգումներ մամուլն կը պարտին իրենց իրաւործումը, եւ մամուլն է կրնայ ըսուիլ զԱնգլիա կազմակերպողը եւ այս մեծ գործին մէջ գտած է նա իւր բոլոր ոյժը: Ռօպլըթ Բիլ քանիցս յայտարարած էր թէ մամուլն իրեն թիկունք ըրած կրնար Խորհրդարանը տապալել: Երեսփոխանները շատ անգամ Թայֆէն կ'առնուն իրենց քաղաքականութեան փաստերն եւ ատենախօսութեանց տարրերը: Ատենախօսք Խորհրդարանի մէջ խօսելէ ետեւ սըրտաթուռն կը բանան հետեւեալ օրուան թերթերը տեսնելու համար թէ ինչ կարծիք յայտնած են իրենց վրայ:

Հիւսիսային Բեւեռը ուղեգնացութիւն մը եղաւ, մամուլը նախաձեռնութեամբ էր. Տէյլթ Թէլէգրաֆ պատճառ եղաւ որ Սթէնլի ճանբորդեց Ափրիկէ. Լոնտրայի ականները Թայֆի յատակագծին վրայ շինուեցան, եւ նախ քան զայդ յատակագիծը պատրաստել, Թայֆէ երեք տարի քննել տուաւ Եւրոպայի մէջ գտնուող ականները: Տէյլթ-

Նիս յատուկ թղթակից մը յղեց ի Կեդրոնական Ասիա՝ Ռուսերու գիրքին վրայ ըստոյգ տեղեկութիւններ առնելու համար: Սուաքիմի մէջ երկաթուղի շինելու խորհուրդը տուողը Տէյլթ Թէլէգրաֆն էր. Սիւն-Գաբիւր ծախքովը Թունուզի վրայ քննութիւններ ընել տուաւ:

Պատերազմի ժամանակ մանաւանդ անգլիական մամուլն ազդեցութիւնը շատ մեծ է: Խորհրդարանները կը վարանէին թէ ինչ ընեն, Թայֆէ պատերազմիլ պէտք է ըսուաւ. երկրորդ օրն պատերազմը պաշտօնապէս հրատարակուեցաւ: Եւ այդ պատերազմի շրջանին Թայֆէ դիկտատորի ազդեցութիւն մը բանեցուց երկրին եւ Խորհրդարաններուն վրայ. պաշտօնէութիւնը ընկաւ եւ Լօրտ Ռակլան, ընդհանուր հրամանատար բանակին, կը պարտաւորէր խորհուրդ հարցնել Ռեյնլի՝ առաջին եւ մանաւոր թղթակից զոր Թայֆէ պատերազմի դաշտը յղած էր: Այս թղթակիցը կառավարեց զԱնգլիա եւ Թայֆէի գերիշխանութիւնը զըրաւ այն պահուն բոլոր երկրին իշխանութեանց վրայ:

Թայֆէ որ եւրոպական ամենէն մեծ լրագիրն է, երկար ատեն միահեծան իշխեց լրագրական հրապարակին վրայ. բայց այսօր իւր հետ կը մրցին վերեւ յիշատակած ուրիշ թերթեր: Օտար ամէն կուսակցութեանց, իւր ըով չմօտեցուններ բնաւ պաշտօնական մարդիկ կամ քաղաքագէտք: Թայֆէ գործի մանաւանդ լրագիր է եւ Լոնտրայի գործիքն է: Երկու սերունդներ տեսան այն իշխանութիւնը զոր բանեցուց խորհրդարանական եւ օրէնսդրական խնդիրներու եւ անոնց լուծման մէջ: Որ եւ իցէ վիճաբանութեան մը առթիւ երբ կարծիք մը յայտնէ՝ իւր դատը, իւր ըսածը կ'ընդունուի: Անգլիայէն դուրս ամէն երկրի մամուլն կը համառօտէ կամ կ'արտապէ անոր յօգուածները. կառավարութեանց ոմանց համար անգլիական աշխարհավարութիւնը Թայֆէի աշխարհավարութիւնն է: Հնգկաստան, Գահիրէ եւ Պոլիս, մեծ նշանակութիւն ունին իւր գրածները: Քաղաքական եւ գրական աշխարհի բոլոր գերազանց գրիչներն Թայֆէի աշխատակցեցան, եւ կը գրեն մեծիմաստ գրագէտներ,



որ կը նախընտրեն հանդէսներու քան թէ օրագիրներու մէջ յօդուած գրել, Թայֆի համար բացառութիւն կ'ընեն: Պարնս, որուն անունը պիտի յիշենք եթէ չենք յիշած արդէն՝ ուշադրութեամբ կը կարդար մեծ հանդէսները եւ ամէն անգամ որ գերազանց գրիչ մը կը գտնէր անոնց մէջ՝ իսկոյն Թայֆի աշխատակցութեան կը հրաւիրէր: Այսօր իւր ոսոխները՝ մեծադիր օրագիրք, իրենին նման խմբագիրներու ժողով ունին, բայց ոչ մին կրնայ հաւասարիլ անոր կարեւորութեամբ եւ չքով: Միակ թերթն է Թայֆ որ կը վաճառի 30 սանթիմի մինչ միւսները կը վաճառին 2 սու — քսան փարա — : Անգլիացի լրագրատեաք կը սիրեն ճարտարագործութիւններ ինչպէս Ճիլլըր Ա. Պէքըթ օր մը առանձին ամսուր Թայֆ մը գրեց. Պրուհամ մէկ թիւ Էպիֆանիոս Բըֆի — եւ Զըրլի Պրուքս ամբողջ մի Բըֆի:

Թայֆի հիմնարկութեան թուականն է 1 յունվար 1785 եւ ճիշդ նախորդ տարին յունվար 1 ին հարիւրամեայն տօնուեցաւ: Երկարակեցութեան այսպիսի օրինակներ քիչ են ինչպէս մարդոց մէջ նոյնպէս օրագիրներու մէջ. բայց մանաւանդ հազուադիւրէն է հարիւր տարի ապրելէ ետեւ ծերութեան եւ տկարութեան բնաւ հետք մը չկրել իւր վրայ: Լոնտրայի մէջ միայն մի լրագիր կայ Մօնթէնի Բօֆը որն որ մէկ դարէ աւելի մեծ է բայց ի իրենսականութեամբ և ի կորով աւելի առողջ կը չարունակուի հրատարակուիլ, եւ պիտի անցունէ դարեր ալ: Սա 1772ին հրատարակուիլ սկսած է, Մօնթէնի Բօֆի էնք Զէնըլլ Կոֆերթայլըր անուամբ: Առաւօտեան միւս լրագիրներն որոնք անհուն ժողովրդականութիւն եւ ամենընդարձակ ծաւալ մը ունին, դեռ նոր են բաղդատաբար. եւ այս նորերուն մէջ հնագոյնն է Մօնթէնի Արթերթայլըր 90 ամեայ եւ կրտսերագոյնն է Standard 28 ամեայ:

Morning star «Աստղ առաւօտեան» երկար ատեն փայլեցաւ ի հաստատութեան, բայց նա ալ չիլաւ ինչպէս չիցան իրմէ յառաջ ուրիշ ազդեցիկ թերթեր որք 30-40 տարիներ ապրեցան: Թայֆի առաջին թիւը թէ 1785 յնվար 1ին հրատարակուեցաւ բայց լրագիրն իւր այսօրուան անունն առած էր միայն 940րդ թուէն սկսեալ, այսինքն 1788 յունվար 1 էն: Այն ատեն հաստատութիւն

գտած լրագիրներու անուն փոխելը անսովոր բան մը չէր: Այսպէս Բըֆի Կոֆերթայլըր քանի մը անուն փոխեց, նախ London Daily post and general Advertiser, յետոյ General Advertiser, յետոյ Morning Post, մինչդեռ Թայֆ իւր առաջին երեք տարիներու համար Daily Universel Register անունը կրեց: Մեծ լրագրին վերջին թիւերը նորանուն լրագրին առաջին թիւերէն մեծ տարբերութիւն մը չ'ունէին, եւ Թայֆ իւր ժամանակակիցներուն վրայ դերազանցութիւն մը չէր ունեցած սկիզբները: Այն ժամանակ լրագիրներու պարունակութիւնն էր աւելի կամ նուազ ստոյգ լուրեր, բանբասանք, յոռի ոտանաւորներ, եւ բազմաթիւ ծանուցումներ: Արդի խմբագրական յօդուածներն անծանօթ էին դեռ, բայց անոնց տեղ կը բռնէին նամակք առ Խըմբագիրն:

Ճօն Ուօլթէր Թայֆի հիմնադիրը ածխավաճառի մը որդին էր 1758ին ծնած. հօրը մահուանէն ետքը այդ արհեստաւորաց խմբին նախագահ եղաւ: 1772ին ապահովագրութեանց գործակալ եղաւ եւ մեծ հարստութիւն դիզեց. քանի մը առեւտրական նաւեր զորս ապահովագրած էր Ուօլթըր Ֆրանսացիք կալանաւորեցին. եւ այդ առթիւ Ուօլթըր 80,000 անգլ. ոսկի կորոյս: Այս ձախողութենէն ետքը 1784ին չէնք մը վարձեց, ուր 1866ին London Gazette կը հրատարակէին եւ այնուհետեւ ինքն ալ սկսաւ (85 յունվար 1ին) հրատարակել իւր լրագիրը: Թայֆի առաջին թիւը 1 թերթ և 4 էջ էր, որոց 2 էն աւելին ծանուցումներով լեցուն: Այդ առաջին թուոյն մէջ արտաքին լուրերը կը գրաւեն սիւնի մը կէսը. 84 դեկտ. 5ին Վարչաւիպէն քանի մը լուրեր. 14ին Ֆրանքֆորթէն 2 լուր. նոյեմբեր 10ին 1 լուր Կ. Պոլսէն. դեկտ. 25ին Փարիզէն 2 լուր, Ռոթէրտամէն 1 լուր, 10ի չափ ալ հակիրճ լուրեր Լօնտօնէն. Համբըթի եւ Հէնրի Դ. ի վրայ «Թատրոն» վերնագրի ներքեւ համառօտ տեսութիւն մը. հին մարդոց շատ ասորժելի չաղիազիւթիւններով լի ամբողջ սիւն մը: Թայֆի յաջողութիւնը արագ չեղաւ. 1786ին Ուօլթըր 150 ոսկի տուգանքի դատապարտուեցաւ Լօֆպըրօ լորտին դէմ իբր թէ զրպարտական հրատարակութիւններ ըրած ըլլալուն հա-







տատութեան դռնէն ներս մտնէր մի և նոյն պատճառաւ :

Ով զարմանալի հեղեղութիւնք բազդին.... Պայծառ օր մ'էր, ձմրան մէջ գարնան օր մը, սիրեցի ընդ այդ բաղձանքս, առնուլ կարօտս : ուղղեցի քայլերս դէպի հոն ուր պիտի կարենայի տեսնել բազմաթիւ հիւանդներ, հաշած հայ սրտեր, մաշած հայ թոքեր :

Հասայ Ազգին տունն, մտայ ներս դողդոջուն ու ծանր քայլերով եւ երկու արտասուաց կաթիլներ կաթեցան աչերէս :

Այլ թէ ինչո՞ւ.....

Ե՛հ, ըսի ինքնիրենս, որչա՛փ դժբաղդ մարդիկ կան այս աշխարհիս մէջ եւ որչա՛փ թշուառ մարդիկ այս հաստատութեան մէջ : ով կարող է մեղադրել այն խեղճ մահկանացուն որ արտասուաց հեղեղներ թափելով ներս կը մտնէ այս դռնէն աւելի իւր սրտովն հիւանդ քան մարմնովն եւ ով կարող է դատաւարտել այն թշուառ արարածն երբ կը մտնէ հոն կիծոտ քայլերով ու խելայեղ եւ կը չփոթէ հիւանդանոցն ըսպանդանոցին հետ :

« Ինչպէս կը մտնէ հոն եւ ինչպէս դուրս պիտի հանեն զինքն » . այս է խոհն որ կը տանջէ իւր միտքն ու հոգին :

Այս տխուր խորհրդածութիւններով համակեալ մտայ սրահ մը, ընդարձակ սրահ մը ուր տեսայ բազմաթիւ մահճակալներ մահճակալներու վրայ :

Տրամութիւնն համազգեստ մ'էր հոն զոր ամէն հիւանդ կը կրէր եւ տխրութիւնն ճակատագիր մը զոր հիւանդութիւնն կը գրէր :

Ամէն կողմ կեանքի պատկերներ, ամենատխուր պատկերներ . հոս՝ սրտեր որք կը վառին, հոն՝ աչեր որք կը մարին, հոս՝ արտսուէր որք կը թափին, հոն՝ հառաչանք որք կը թռին..... :

Եւ ի՛նչ տխուր պատկերներ..... :

Ահա հիւանդ մը տոգոյն ու դալկադէմ, կը հազայ խեղճը . կարմիր բիծեր, մահու կնիքներ կը նշմարեմ իւր ճերմակ թաշկիւնակին վրայ . աղէկտուր եւ յուսահատ ակնարկ մը կը նետէ հոն, կը ծալէ զայն խռնամբ ու կը գետեղէ իւր բարձին տակ . վայրկեան մը վերջը հարկ է վերստին բանալ այդ թաշկիւնակն, այդ մահու դատաւար

կնիքն, կարգալ զայն անգամ մ'ալ, դրօշմել ու ծալել :

Եւ դեռ քանի՛ անգամներ..... : Բայց հազն, այդ կոշտ ու աններդաշնակ ձայնն որչա՛փ տխուր կը հնչէ եւ որչա՛փ տխուր կը ներգործէ մարդկային սրտին վրայ :

Շօբէն եւ Մէնտէլսօն իրենց տխրանքուագ ու սրտակուր եղերերգութիւններով եւ Երեմիա իւր հոգեյոյզ եւ աղէխարշ ողբերով ու կոծերով չպիտի կարենային մըրցիլ իրեն հետ, չպիտի կարենային ընդ սրտերն այդչա՛փ սգով ու արտասուքով :

Այդքան պերճախօս է այդ անիծեալ մահանուագն, հիւժեղոյն հազն, եւ ի՛նչ լաւ կը պատկերէ, Աստուած իմ, հիւանդին սպառնացող վտանգն, քաշած ցաւերն, մաշած թոքերն, հաշած մարմինն :

Այդ հազայ հիւժեալն . մահու ամենատըլուր զանգակի ղողանջիւնն է այդ որ կը հնչէ մեռնելէ յառաջ, եւ որ առաւել սոսկալին է՝ նոյն իսկ դատաւարտելոյն ականջին :

Այդ մօտենամ իրեն, կը սեղմեմ իւր ձեռքերն իբր պարզ այցելու մը . խաբուսիկ ժպիտ մը կը փայլի իւր դիմաց վրայ ու կ'անհետանայ նոյնհետայն :

Տեղատարաւ անձրեւ մ'ու սոսկալի փութորիկ մը կանխող փայլակն է այդ վաղանցիկ ժպիտն :

— Ի՞նչ ունիս, եղբայրս, հարցուցի իրեն :

— Թոքախտ ունիմ, պատասխանեց նըւաղեալ ձայնիւ մը որչա՛փ իւր փտտած թոքերն ու կրծուած կրծերն կը ներէին :

Արտասուաց բիւրաւոր կաթիլներ պատմեցին իւր անցեալն ու ներկայն եւ փութացին խեղդել իւր արդէն խեղդուած ձայնն :

Գիտէր իւր հիւանդութիւնն, շատ լաւ սովորած էր զայն ճանչնալ այդ գործնական վարժարանին մէջ . նշմարած էր մօտալուտ վտանգն սպառնալից եւ գուշակած թէ կեանքն կ'անհետանար քայլ առ քայլ :

Անխիղճ ու անդուլթ բնութիւնն, չէր վարանած վարդի գոյներով պատկերել իւր սպիտակ թաշկիւնակին վրայ իւր վարդի կեանքն :

Ուշիմ երիտասարդ մը թուեցաւ ինձ, չուզեցի երկարել խօսակցութիւնս եւ այլ



եւս բնաւ չխօսեցայ իւր հիւանդութեան վրայ :

Ի՞նչ կրնայի ըսել իրեն . գիտէի թէ ընդունայն էր մխիթարական խօսքեր որոնել այդ անմխիթար սրտին եւ անախորժ մահուան դատապարտեալի մը քայլերուն հետեւող կղերականի եղերական դերն կատարել :

Վանեցի հայ կտրիճ մ'էր այդ թշուառը ամուսնացեալ, երեք զաւակներու տէր եւ հինգ անհուն տարիներէ ի վեր հայրենի յարկէն հեռացած :

Երջանիկ ըլլալու եւ գլխաւորապէս իւր ընտանիքն երջանիկ ընելու յուսով հինգ անվերջանալի տարիներ ծառայութեան ծանր լուծին տակ մաշած, ընտանեկան խնամքներէ ու սփոխանքներէ բոլորովին զրկուած եւ ցաւոց ու վշտաց անմարելի կրակով թրծուած կը փութար գրկել այն ցուրտ ու սեւ հոգն որ շատ ու շատ պաղ էր իւր կըրակոտ կրծոցն ու շատ ու շատ մութ՝ իւր վառվռուն սրտին :

Արտասուաց հեղեղներ կը հոսէին անդադար իւր աչերէն . հազիւ կարողացայ ըսել .

«Մի՛ յուսահատիր, եղբայրս, Աստուած ամենակարող է», սեղմեցի իւր ձեռքերն անգամ մ'ալ ու հեռացայ :

Խիստ տխուր տպաւորութիւն մ'ըրին վրաս իւր սրտածմիկ խօսքերն եւ դժուարաւ կրցայ ցամբեցնել աչացս մէջ այն արտասուաց կայլակներն որք կ'ուզէին դուրս ցայտել յորդառատ :

Հեռացայ մօտենալու համար ուրիշ երիտասարդի մը, աւելի գեղադէմ, վառվռուն աչերով, հրաբորբոք այտերով որ նշտած անկողնոյն մէջ անդադար կը հազար, հազար անգամ կը հազար . սպասեցի քիչ մ'իրեն մօտ, փոքր ինչ հանդարտեցաւ հազն եւ պատրաստուեցաւ խօսիլ :

Չհարցնուցի թէ ի՞նչ ունէր այդ թշուառն . արդէն քիչ մ'առաջ շատ պերճօրէն խօսած էր իւր ցաւերն պատմելու, իւր վշտերն յայտնելու համար :

Տեղեկացայ միայն որ վարժարանի ուսանողներէն քսանամեայ մեցի խելացի երիտասարդ մ'էր, բարեւեցի եւ իւր ձեռքերն սեղմեցի դոյզն ինչ ժպտելով . ըն-

դունեց բարեւս յարգանքօք եւ սկսաւ խօսիլ :

«Ո՛հ, քանի՛ բաղցր է, ըսաւ, տառապեալ պանդխտին համար տեսնել իւր մօտ ձեզ նման աղնիւ երիտասարդներ որք անվեհեր մեզ կը մօտենան, կը սեղմեն մեր ձեռքերն եւ մի քանի յուսադրական խօսքերով կը ջանան սփոխել մեր անմխիթար սրտերն :

«Որչա՛մի ահարկու եւ սոսկառիթ է այն դժբաղդ մահկանացուն որ դատապարտուած է գործածելու Ասլեպեայ զէնքերն . ոչ որ չիշխեր մօտենալ իրեն :

«Եւ դժբաղդաբար շատ հաղուադիւտ են այդ անվեհեր անձնաւորութիւններն :

«Վեց երկար ամիսներէ ի վեր կը տառապիմ այս վշտաց ձորին մէջ, հազիւ վեց անգամ այդ տեսակ այցելութիւններ ընդունելու ամենամեծ բաղդն ունեցած եմ . եւ սակայն գոհ եմ ինձ վիճակած բաղդէն . ամէն մարդ երջանիկ ըլլալու համար չէ ստեղծուած . նա մանաւանդ երբ կը խորհիմ թէ որչա՛մի դժբաղդ պիտի լինէինք եթէ մեր պաշտելի Հոգաբարձութիւնն ըստ կարելոյն չմատակարարէր մեզ հայրական գութ, մայրական սէր ու ընտանեկան դորով :

«Կրկին նախախնամութեանց կը հաւատամք մեք այժմ . մին անսահման երկնից մէջ . Աստուած է այն . իսկ միւսն այս սըրբաղան հաստատութեան անձուկ չրջանակին մէջ . Հոգաբարձութիւնն է այդ . . . »

Եւ արտասուաց հեղեղներ ողողեցին իւր հրաբորբոք այտերն որք արդէն մարիլ սկսած էին :

Յուզուած էի վերջին ծայր . ի զուր կ'ուզէի խօսիլ եւ մի քանի սփոխիչ ու քաջալերական խօսքերով պատասխանել իրեն . այդ արտասուաց հեղեղներ քշած տարած էին խորհելիքս ու խօսելիքս :

Ո՛ւր էր թէ կարծրացեալ սիրտ կրող բժշկի մը պէս կարենայի լսել այդ աղիողորմ նկարագրութիւնն, զիտել կենաց այդ ամենատխուր ու երկներանդ պատկերներն եւ մնալ անտարբեր . . .

Յուզուած էի ի հոգի . չպիտի կարենայի այլ եւս շարունակել պտոյտս հիւանդանոցին մէջ առանց փնասելու ու փնասուելու :



— Նրիտասարդ ես, ըսի միայն տը-  
խուր ձայն ու մը, տակաւին շատ բարեբաստ  
օրեր կ'սպասեն քեզ. աղբին մէջ, ինչպէս  
կը տեսնես, գորովադուրթ հայրեր ու գլխա-  
ւատ մայրեր չեն պակսիր. նոքա բնաւ չեն  
մոռցած այս նուիրական հաստատութիւնն,  
անհոգ եղիր:

— Ճիշդ այդ յուսով է որ մի քիչ կ'եր-  
կարին մեր արդէն կարի կրճատեալ կենաց  
օրերն եւ այդ յուսով է որ մերթ ընդ մերթ  
կը ցամբին մեր մշտաբուռն տականողին,  
պատասխանեց արտմագին:

« Ահա դարձեալ արտմութեան օրեր որք  
կը մօտենան ու տխրութեան ժամեր որք  
կը հասնին. կաղանդն ու Մնունդն:

— Ինչո՞ւ տխրութեան օրեր, ընդմի-  
ջեցի:

— Այո, տխրութեան օրեր, ցաւո՞ց օ-  
րեր, պատասխանեց սրտայոյզ. բոլորովին  
տարբեր է այս աշխարհ յորում մեք կ'սպ-  
րիմք, կատարեալ հակապատկերն ձեր աշ-  
խարհին. երբ ուրախութեան արտասուք կը  
կաթին ձեր աչերէն, տխրութեան կայլակ-  
ներ կ'ողողեն մեր այտերն եւ երբ ցնծու-  
թեան ձայներ կ'արձակին ձեր բերնէն, թախ-  
ծութեան հառաչանք ու հեծեծանք կը թը-  
ռին մեր սրտէն եւ երբ.....

— Մի՛ յուսահատիր այդչափ, եղբայր, ը-  
սի. Աստուած ամենակարող է. սեղմեցի  
իւր ձեռքերն ու հեռացայ:

« Մի՛ մոռնաք զմեզ » . այս եղաւ իւր  
վերջին խօսքը:

Բոլորովին արտմութեամբ համակեալ չու-  
ղեցի, չկրցի այցելել Հիւանդանոցի միւս  
սրահներն, թողուցի ուրիշ առթի այդ թե-  
րին լրացնել եւ յամբ քայլերով ու համբ  
լեզուաւ հեռացայ հանդերձեալ ու այս աշ-  
խարհի այդ սահմանադրւէն, Հիւանդանո-  
ցէն, տանելով հետս խիստ տխուր այլ շը-  
նորհապարտ սիրտ մը եւ պահելով այդ սըր-  
բազան հաստատութեան հսկող նախախնա-  
մութեան վրայ ամենաքաղցր եւ անմոռա-  
նալի յիշատակ մը:

24 Դեկտ. 1883

ԹԱԼԻԼԷ

## ՆՈՐԱՎԷՊ

### ԽՐՃԻԹԻ ՄԸ ՄԷՋ

(Շար. եւ վերջ)

Գ.

Գեղեցիկ աշուն մ'էր 1883 տարւոյ ա-  
շունն. կանաչորակ էին դաշտերը տակաւին  
նոյեմբերի մէջ, ծառոց ճիւղերուն վրայ կը  
փայլէին կիսադալուկ տերեւներ, և արեւն  
իւր կաղդուրիչ ճառագայթներովը հեռի կը  
վանէր ալեգարդ ձմեռը: Ծ..... գիւղի նոճե-  
զարդ դաշտն յոյժ գեղեցիկ է սոյն եղանա-  
կին. ծաղկազարդ մարգագետինը երփնե-  
րանք կը փայլին և մշտադալար մայրիք հը-  
պարտ գլուխին կը բարձրացնեն տերե-  
ւաթափ ծառերուն դէմ:

Հանդարտիկ առաւօտ մ'էր, մէկ քանի  
թռչնոց ճիւղեր միայն կը վրդովէին օդին  
լուռութիւնը, քանզի աշնան ատեն խիստ  
քիչ բնակիչ կը գտնուի այդ մենակեաց  
գիւղն, եւ մէկ մէկէ հեռու ձկնորսի հիւ-  
ղերէ զատ տուն մը չիկայ մարգաբնակ: Ա-  
րեւուն անդրանիկ շողերը մառախուղը վա-  
նելով ոսկեճաճանչ կը ներկէին ողորմելի  
ապակիներն այն հէք տնակին՝ որ ինչպէս  
ըսինք Ծ..... գիւղի ծովեղբորը կը գտնուէր՝  
սեպածեւ ժայռի մը մօտ: Ներքին տեսքն  
ալ այդ խրճիթին արտաքինին պէս աղքա-  
տիկ էր, բայց մաքուր եւ կոկիկ ձեռք մը  
նախախնամող կարծես ամեն ինչ խնամած  
ու կարգադրած էր հոն:

Դրան սեմին վրայ արեւու ճառագայթի  
պէս խարտեալ մանկիկ մը վարդադոյն թա-  
թիկներով կը խաղար հողին քարերուն հետ  
մերթ սիրուն գլուխը կը թոթուէր ոսկի  
գանգուրներն աչացը վրայէն վանելու հա-  
մար եւ կը ժպտէր գուարթուն մօրը դառ-  
նալով, որ աղքատիկ անկողնոյ մը վրայ տա-  
րածուած կը դիտէր իւր մանկական զուար-  
ճութիւնները: Մօտէն դիտելով այն դալ-  
կահար կինը, նիհար ու գողդոջուն, որոյ  
աչաց նուաղուն լոյսը գոգցես գթութիւն  
կը հայցէր օրուան վեհափառ աստղէն,



զննելով ուշադիր այն բարակ դէմքը, այն նուրբ ու անգոյն շրթները, այն սեւ հոպոպիքները շնորհալի ճակտուն բոլորտիքը, կարելի էր ճանչնալ երբեմն այնքան գեղանի, այնքան շնորհաշուք Արմինէն:

Աւաղ, վիշտն ու աղքատութիւնը կը հիւծեն առողջութիւնն, և հիւանդութիւնն ալ կը հիւծէ գեղեցկութիւնն՝ այն գիւրաթառամ ծաղիկը զոր Աստուած տուած է մարդոյն առ ի սփոփանս:

Իւր անանկութենէն տարի մը յետոյ մեռած էր Պ. Մելիքեան: Այն մէկ տարուան միջոցին յորում Արմինէ և իւր հայրն աղքատիկ ապրած էին Պոսփորի առանձնակեաց գիւղերէն միոյն մէջ, չատ բաներ անցեր էին նոցա գլխէն:

Նախնի ճոխութեանց հետքն իսկ մնացած չէր. ազգական ու բարեկամ մի առ մի հեռացեր էին անոնցմէ, ոմանք առարկելով տեղւոյն հեռաւորութիւնը եւ ոմանք զբաղմանց առատութիւնն. այլ ասոնք պատրուակ էին միայն. զիրենք սոսկացնողը չբաւորութեան սեւ ուրուականն էր:

Մելիքեան կորուսած էր իւր առողջութիւնը, կուրծքի հիւանդութիւնը սկսած էր սաստիկ չարչարել զինք եւ խիստ քիչ անգամ կրնար տնէն դուրս ելլել: Խեղճ մարդը կ'անցնէր իւր օրերը վշտագին խորհրդածութեամբ, երբէք յուսոյ ժպիտ մը չէր պայծառացներ իւր խորշումեալ ճակատը. կը տաղնապէր նա՝ եւ տեսնելով Արմինէի տառապիլը, կը տագնապէր առաւել քան երբէք: Այդէր ժամ առաջ ազատել իւր աղջիկը այդ չբաւոր կեանքէն, սակայն ամէն անոնք որ երբեմն իրեն ծնրագիր աղերսած էին զիրենք իւր զաւակը կոչելու՝ արհամարհանօք իրենց դռները գոցած էին իրեն, և այն երկնագեղ ծաղիկն՝ որու մօտենալու համար երբեմն հարկ էր խորանի մ'ատիճաններէն անախդ՝ վեր ելլել կարենալ, այժմ նետուած էր վայրի դալարեաց մէջ եւ անվեհեր ճամբորդը գլխոյ հաշեցուած մը հազիւ կը նետէր անոր: Իսկ նորատի աղջիկը մի միայն կը ջանար կարելի եղածին չափ իւր հայրը մխիթարել. այնքան լաւ կը կատարէր անական սպասներն որ երբէք զգալի չէր ըլլար սպասաւորաց բացակայութիւնն, և երբ հէք ծերունւոյն մօտը գտնուէր, միշտ զուարթութեան դի-

մակ մը կ'առնուր: Այլ երբ մնար առանձին ինքզինքը կուտար իւր դառն խորհրդոց, եւ արտասուք կ'ողողէին իւր թաւշեայ այտերն: Անցեալն ընդարձակ երկրի մը պէս կ'երեւէր իւր աչաց, իւր աշխոյժ երեւակայութիւնն կը գունաւորէր զայն եւ իւր յիշողութիւնն գերթ անըջային աշխարհ մը հոն կը սաւառնէր: Անդ կ'ընդնմարէր երիտասարդութեան եւ խնդութեան զուարճալի կզղիններն, որք փոքր առ փոքր խոյս կուտային իրմէ, կապտագեղ ծովու մը վըրայէն որոյ ծփանքն հեռաւոր ներդաշնակութեան մը պէս կը հնչէին իւր ականջին: Այժմ ճակատագրին սեւ վարագոյրը կ'իջնէր իւր պայծառագոյն երազներուն վրայ. անոնց չողուն նկարներն որք ստէպ օրօրած էին իւր սիրտը, թուր՝ դացեր էին ամարնային սպիտակ ամպերու պէս, որք հողմէն ցիր ու ցան կ'ըլլան:

Այլ եւս աշխարհի վրայ չէր յուսար գտնել սիրտ մ'իրենին կարեկից, եւ չըրթունք որ գլխի ժպտէին իրեն, կամ ձեռք մ'որ սրբէր զիւր արտօսը: Եթէ այդ մ'ըլլար անոր տեղ, թերեւս ապաւէն փնտռէր աշխատութեան, համբաւոյ եւ ուսման մէջ. բայց նա կին մ'էր, փափուկ եւ զգայուն կին մը, յուսակտուր եւ լքեալ՝ որու սիրտը կը ճնշուէր ցաւոց ծանրութեան ներքեւ: Խառն ի խուռն գաղափարներ կը դիզուէին մտքին մէջ, եւ իւր հոգին ալեկոծեալ նաւու մը պէս կը տատանէր վշտաց կոհակներուն վրայ, չունենալով այլ խաբիս, բայց միայն հաւատքը որ կնոջ միակ ապաւէնն է փոթորիկ ժամանակ, եւ որ կը զօղէ զայն երկնից հետ: Քանի՞ ժամեր կ'անցնէր նա խաչելութեան առջեւ ծնրադիր ու դողդոջուն՝ միմեջելով ջերմեանդն աղօթներ ու արտասուելով. եւ արդարեւ այն անարատ արտասուեաց մէն մի կաթիլն իրեն հետ կը տանէր հոգւոյն վրայ. ծանրացող վշտէն մեծաւոյն մաս մը, եւ սիրտփանքը տակաւ առ տակաւ կ'իջնէր իւր յուսահատ սրտին վրայ ու կը կազդուրէր զայն:

Սակայն այդ աղջիկն ամէնէն լքուած, ամէնէն արհամարհուած՝ ունէր բարեկամ մը, ունէր օգնական մը, հետն արտասուելու համար, եւ իւր սիրտը յարած էր անոր սրտին անբաժանելի կերպիւ. բարեկամու-



Թիւն էր այս, այլ սուրբ բարեկամութիւն մ'որ սնած էր տառապանաց օրօրոցին մէջ:

Դիւրին է գուշակել թէ Երուանդն էր այդ մտերիմը, որ առ ոչինչ համարելով իւր հօր սպառնալիքներն, առաւել քան երբէք կը յաճախէր Պ. Մելիքեանի տունը:

Ազնիւ երիտասարդը կարծես ամօթապարտ էր իւր վաղեմի բարեկամին առջեւ. նորա մէն մի ցաւը յանդիմանութիւն մը կը համարէր ինքզինքին եւ կը ջանար բարեկամութեամբ ու անձնուիրութեամբ մոռցնել տալ իւր հօր դործած անիրաւութիւնը:

Ձմեռուան մէջ Մելիքեանի վիճակը սկըսած էր ծանրանալ, անկողնէն չէր կրնար ելլել, եւ երբեմն անշունչ կը մնար մէկ երկու վայրկեան: Վերջապէս մահուան չարաչառակ ստուերը նոցա սեմին վրայ երեւցաւ: Երբ խեղճ հիւանդն զգաց որ իւր օրհասը մօտ է, չունենալով այլ մէկը որու կարենար յանձնարարել իւր աղջիկն՝ իրեն մօտ կանչեց զԵրուանդ. եւ յայտնեց նմա թէ իւր վերջին կամքն է որ մահուանէն վերջը Արմինէ տարուի ի որբանոցն Գալֆայեան: Դժբաղդ հայրը մտածեւ էր թէ հոն միայն կարելի էր գտնել հէք որբ աղջկան մը կարեկից սրտեր ու ապահով պատասխարան մը: Երուանդ որ բնաւ չէր սպասեր այս յայտարարութեան, սոսկալի կերպիւ գունատեցաւ, սիրտը կը բաբախէր ուժգին եւ չկրնալով զսպել յուզմունքն՝ իւր ձեռաց մէջ առաւ օրհասականին պաղ ձեռքերը, եւ արտասուախառն շեշտիւ աղաչեց նմա հրաժարիլ այդ որոշումէն եւ իրեն կնութեան տալ զԱրմինէ: Պ. Մելիքեան նախ առարկեց թէ այդ ամուսնութիւն երիտասարդին հօր կամաց հակառակ կ'ըլլայ, ուստի կրնայ թէ՛ իրեն դժբաղդութեան պատճառ ըլլալ, թէ՛ Արմինէի:

— Հարուստի տղայ ես դու, կ'ըսէր նա, ուստի բարձրագոյն աղջիկ մը կրնաս առնել հօրդ կամօքն եւ երջանիկ ըլլալ: Գիտեմ ազնիւ սիրտդ դրդեալ ի գիտի կ'ընէ այդ խնդիրը, բայց ես չեմ ուզեր պատճառ ըլլալ թշուառութեանդ:

Երկար ճառով մը պատասխանեց Նրուանդ այս խօսքերուն. լուսափայլ գոյներով ներկեց Արմինէի մէն մի յատկութիւնն եւ համոզեց զձերուսին թէ ինքը կրնայ իւր

հօր սիրտը շահիլ ու հաւանութիւնն առնուլ վերջապէս եզրակացուց ըսելով, թէ՛ եթէ այդ շնորհը մերժուի իրեն, ինք ուրիշ ոչ ինչ ունի ընելիք բայց միայն թեւաբաց դիմել մահուան գիրին: Երկար ընդդիմութենէ մը վերջը նորա խնդիրը կատարուեցաւ եւ Պ. Մելիքեան երկու երիտասարդաց ձեռքերը միացնելով աչերը փակեց:

Սգոյ ամիսներն անցնելէն ետեւ, անշուք կերպիւ կատարուեցաւ Երուանդի ու Արմինէի հարսնիքը Գատը-գիւղի եկեղեցին:

Խեղճ երիտասարդն այս ամուսնութեամբ կորուսած էր իւր ապագան. իւր համբաւ շահելու երազներն, անձնասիրական զգացումները, անուան անմահացնելու համար ըրած ջերմ ուխտերը՝ բոլորն ալ սիրոյ հընոցին մէջ հալած էին: Հայրենի տնէն վռնտուած էր. ժառանգազուրկ իսկ եղած էր ծնողէն, բոլոր ազգականք խոժոռ դիմօք կը նայէին իրեն, եւ եթէ անոնց մէջ գտնուէին իսկ բարեգութ սրտեր, գաղտագողի միայն կը տեսնուէին իւր հետը, հօրն անհաճոյ չերեւելու համար, քանզի հարուստ եւ զօրաւոր էր իւր հայրը: Իւր տօմարակալի պաշտօնն ուրիշի մը տրուած էր, եւ ինքը դռնէ ի դռնն պաշտօն կը մուրար. չատեր կը մերժէին, չատեր ալ խոստումներ կ'ընէին առանց բնաւ զանոնք դործադրելու: Ի սկզբան բնաւ յուսակտուր եղած չէր նա. օրուան տառապանքն ու աշխարհի դառնութիւնքն իրեն մոռցնել տալու համար՝ ընտանեկան յարկին մէջ երջանկութեան ոսկեփայլ գահը միշտ իրեն կ'սպասէր:

Այլ երբ անցան տարիներ, երբ աղբատութիւնն դատարկ ձեռքերով սկսաւ հալածել զիրենք, երբ հաղիւ երեկոյեան յոյժ համեստ ճաշ մը կրնար հայթայթել իւր նիհար ու դալկացեալ կնոջ եւ դեռատի մանկան, յայնժամ խորին յուսահատութեամբ համակուեցաւ իւր սիրտը: Շատ դործերու ձեռնարկեր, այլ ամենն ալ անյաջող ելք ունեցեր էին. դժբաղդութեան չարաչառք հրեշտակը չէր թողուր իւր օձիքն եւ մեծ աղէտներ կ'սպառնար այդ սիրասուն փոքրիկ ընտանեաց:

— Արմինէ կը վշտագնէր յոյժ, այնքան



ազնուաւորութեան երկտասարդի մը թշուառութեան պատճառ լինելուն . չքաւորութեան դիմագրաւելու քաջութիւնն ունէր այլ իւր զաւակին ու ամուսնոյն տառապիլը տեսնելն անհուն վէրք մ'էր իւր սրտին : Քա՛նի քա՛նի գիշերներ կ'անցնէր կանթեղին նուաղուն լոյսովն ասեղնագործելով իւր մանկան օրօրոցին մօտ , ունկն դնելով նորա շնչառութեան անոյշ մրմունջին : Քա՛նի չարաչար աշխատանք կը թափէր քիչ մ'ստակ ձեռք անցնելու համար : իւր մատերը կը ծակծկէին եւ առողջութիւնն կը նուազէր օր օրի . սիրտն արագ բաբախումներ ունէր յաճախ եւ քունն հեռի էր իւր աչքէն :

Իրենց ամուսնութեան հինգերորդ տարին էր . սաստիկ նեղ վիճակի մէջ էին . Երուանդ այնքան ճնշուած էր իւր վշտին ծանրութեան ներքեւ , որ կարծես մտաւոր կարողութիւնն իսկ կորուսած էր . ժամերով անխօս անմուռնջ կը մնար , դիտելով իւր կնոջ աշխատիլը , եւ երբեմն յանկարծ խենթի պէս դռնէն դուրս կը նետուէր ու կ'երթար ծովեզերքը մեծաքայլ կը շրջէր մինչեւ երեկոյ : Արդէն մէկ երկու տարի կար որ իրենց բնակութիւնը փոխադրած էին Ֆ..... գիւղի մեր նկարագրած խրճիթն : Արմինէի հիւանդութիւնը սաստկացած էր . թէեւ արխաւորտ կիներ կը ջանար կրցածին չափ դէմքը զուարթ ու քաղաւածքը թեթեւ ցուցնել , այլ շատ անգամ հազիւ կրնար ոտքի վրայ կենալ :

Ապագային յոյժ մթադին ամպեր կ'ըստպառնային իրենց՝ մանաւանդ իրենց մանկան , որ ծնունդէն ի վեր զրկուած էր ամեն բանէ՝ բացի մայրական գոռանքներէն : Այնքան անուշ տղայ մ'էր նա , այնքան խարտեալ , այնքան խօսուն ու թրթռուն որ Արմինէ երբեմն կը մոռնար ամեն ցաւ երբ նա ժպտէր իրեն հրեշտակի մը պէս :

Վերջապէս հասաւ փրկութիւնն այն հէք ընտանեաց՝ այն պահուն յորում բնաւ չէին սպասեր անոր : Երեկոյ մը Երուանդ դարձաւ քաղաքէն (ուր խիստ քիչ կ'երթար) ուրախ զուարթ , գրեթէ ոտոտտելով գլուկեց համբուրեց իւր զաւակը , պարեր յօրինեց անոր հետ սենեկին մէջ , կանչեց Արմինէն անոյշ ածականներով , եւ յայտնեց

նմա թէ յայնմ հետէ երջանկագոյնն ամուսնոց պիտի ըլլային , թէ իրենց մանկիկն ոսկւոյ ու աղամանդեաց կոյտերու հետ պիտի խաղար , եւ Արմինէ հանդիսից մէջ առջինէն աւելի պիտի փայլէր : Մանկամարդ կիներ նախ կարծեց թէ իւր ամուսինը խեղադարձ է եւ վշտագին մօտիկ կ'ընէր նորա խօսքերուն . բայց երբ Երուանդ նամակ մը հանելով իրեն տուաւ որ կարդայ , յայնժամ նա ըմբռնեց գործին էութիւնն եւ ինքն ալ սկսաւ ուրախանալ :

Այդ գիրն եկած էր յեղիպտոս գտնուող Երուանդի մէկ մօրեղբորմէն , որոյ գոյութիւնն ունենալն իսկ չէր գիտեր խեղճ տղան : Այդ ազնիւ ազգականը յոյժ ծերացած ու այլ եւս աշխատելու անկարող ըլլալուն , կ'ուզէր իւր բոլոր ունեւէր իւր քեռորդին ու իրեն փոխանորդ կարգել զայն . մահուընէն վերջն ալ իւր միակ ժառանգորդը պիտի ըլլար եւ ինքը շատ հարուստ էր : Միայն կը պահանջէր Երուանդէն որ ութ տաս օրէն անսպառնալիկ իւր մօտ գլտնուի եւ գէշն այն էր որ ճամբորդութեան ծախքը չէր զրկած . ուստի , անկարելի էր երեք հոգի միասին ճամբայ ելլել , մանաւանդ որ փոխ առնելու համար վարկ չունէին : Վերջապէս որոշուեցաւ որ Երուանդ առանձին երթայ , եւ մէկ քանի շաբաթէն գայ ընտանիքն ալ տանի : Երկու օր վերջը չոգենաւ կը նստէր նա , յոյժ անմտութեամբ հեռաւոր գիւղի մը մէկ անկիւնն առանց պաշտպանի ու առանց ապրուստի թողնով հիւանդ կին մ'եւ հնգամեայ մանկիկ մը . այլ երջանկութեան յոյսն այնքան շացուցած էր իւր աչքին որ խաւարէն լոյսն ելլողի մը պէս՝ չէր կարող որոշ տեսնել առարկայներն :

Արդէն երկու ամիս եղած էր Երուանդի մեկնիլը , բնաւ լուր մը տուած չէր նա իւր վրայօք , եւ Արմինէ աննկարագրելի սրտատանջութեան մէջ էր : Մէկ կողմէն անտանելի հիւանդութիւն մը , միւս կողմէն օրուան հացին կարօտը կը մաշեցնէին զինքը . գողդոջուն մատերը կը մերժէին որ եւ է աշխատութիւն եւ շատ անգամ օրերը նօթի կ'անցնէր իւր ալքատիկ դրացեաց բերած շերտ մը հացը իւր զաւակին թողնու համար : Օգոստոսին մեկնած էր Երուանդ եւ արդէն նոյեմբերի սկիզբներն էին . ինչ-



պէս ըսինք, Արմինէ երեկոյն միայն դուրս կ'ելլէր տնակէն, տրտու՛մ տխուր կը դիտէր ծովը եւ կարծես աղերսիւ անկէ լուր մը կը խնդրէր իւր ամուսնոյն վրայ: Հազար եւ մէկ տարօրինակ մտածմունք կը պաշարէին միտքը. մերթ կ'երեւակայէր զԵրուանդ խորասուզեալ ծովուն անդէմախոր կոհակաց ծոցը եւ մերթ մահամերձ օտար քաղքի մը մէջ՝ առանձին ու անմխիթար. յայնժամ կը տեսնար թեւեր ունենալ բարձրաթռիչ կարապին պէս եւ սլանալ իւր սիրեկոյն մօտ:

Բաւական ատենէ դուրս չ'էր կրնար ելլել Արմինէ. առաւօտուն դրան առջեւ կը խաղար փոքրիկ Հրանտն եւ ինքն անկողնէն կ'զմայէր անոր վրայ:

Օր մ'ալ որպէս ի վերեւ նկարագրեցինք, այս դրբին մէջ հէք կինը իւր սառած անդամները կը տաքցնէր արեւուն, յոյժ տըկար կ'զգար ինքզինքն եւ թոյլօրէն տարածուած էր անկողնոյն վրայ՝ երբ կառք մը կանգ առաւ դրան առջեւ ու չքեղօրէն հագուած կին մը ներս մտաւ տնակէն: Արմինէ իսկոյն ճանչցաւ իւր սկեսուրն, եւ շատ զարմացաւ. լաւ կը ճանչէր այդ կինը, նորա գոռոզութիւնն ու սեւ հոգին. օգնութիւն կամ զթուրթիւն չ'էր սպասեր անկէ, բանդի քանի քանի անգամներ ամուսնութենէն ի վեր պաղատալից նամակներ գրած էր անոր, քանի քանի աղերսանքներ ուղղած էր նմա ծնրադիր, այլ ամէն անգամ մերժուած էր անկէ անմարտելի յանդիմանութեամբ եւ վռնառած էր դռնէն մուրացիկ կնոջ մը պէս: Ուստի նորա անակնկալ այցելութիւնն եւ խորամանկ ժպիտը բարկութեան բոց մը փայլեցուցին Արմինէի աչաց մէջ, ոտքի ելաւ եւ անշարժ կեցաւ անոր դէմը իւր անվեհեր նայուածքով անոր աչաց մէջ նայելով:

— Սիրելի աղջիկս, ըսաւ այցելու տիկինը շողորորթ ձայնիւ, այսօր եկայ ուրախ լուր մը բերելու: Երուանդ անխղճօրէն լքած է զքեզ, արդէն մեք գուշակած էինք զայդ, նա ազնիւ գործ մ'ընելու անկարող տղայ մ'է. մենք շատ կը սիրենք զքեզ, ուստի եկայ այսօր որ քեզ մեր տունը տանիմ, ալ ասկից վերջը աղքատ չես ըլլար եւ հանգիստ կապրիս մեզ հետ:

— Տիկին, գոչեց Արմինէ, յուզմունքէն

դողդոջուն, ի՞նչ իրաւամբ կ'ամբաստանէք այդ մ'իւր կնոջ ներկայութեան. երբէք գանգատ մ'ըրած եմ ձեզ, ինչո՞ւ համար կուգաք անդորրութիւնս վրդովել. աղքատ ապրած եմ ես ամուսնոյս հետ, աղքատ այլ երջանիկ: Միթէ երբէք ձեր խնջոյից մէջ մտածեցիք Երուանդին եւ անոր զաւկին վրայ, որք պատահաւ մը հաց հազիւ ունէին ուտելու, միթէ երբէք նոցա երջանկութիւն մը հայթայթեցիք: Եւ այժմ կ'ամբաստանէք զԵրուանդ ու կը հրաւիրէք զիս ձեր տունը: Ո՛հ, եթէ իւր ճշմարիտ մայրն ըլլայիք, եթէ ձեր սրտին մէջ գտնուէր մայրական գթոյ դոյզն բոց մը, չպիտի խօսէիք այդպէս, չպիտի թողուիք անմեղ զաւակ մը տարիներով աղքատութեան ծոցն: Արդէն շատոնց համոզած պիտի ըլլայիք ձեր այրը զայն նորէն իւր գիրկն ընդունելու, բայց դուք, հակառակն ըրիք դժուծ չահամուրթենէ գրդեալ: Արդ շատ ուշ կը հասնի ձեր օգնութիւնը, տիկին: աւելի լաւ կը համարիմ հոս մեռնիլ աղքատ ու լքեալ քան թէ ձեզ մօտ արհամարհանօք թաթխուած հաց մ'ուտել եւ լսել միշտ անարգանք ամուսնոյս դէմ ու զաւկիս սորվեցնել գարշիլ անկէ:

Այս խօսքերն արտասանած միջոցին Արմինէ մեռելի պէս դժգոյն էր. բառերը ծանր ծանր կը թափէին բերնէն եւ գէշ զսպուած բարկութիւնը կը դողացնէր իւր ձայնն: Երուանդի մօրուն յաղթուած, ամօթահար, չէր գիտեր ինչ պատասխան տալ, բայց իւր չարամտութիւնն շուտով օգնութիւն հասաւ իրեն:

— Կը ցաւիմ, ըսաւ, բոլորովին տունդ գալու զիջանելուս. արգարեւ դու սովորած ես մուրացիկութեան եւ այդ արուեստը սիրելի դարձած է քեզ բարի յաջողութիւն, աւելցուց նա ժպտելով եւ դուրս ելաւ:

Արմինէ իւր գօրութիւն ու արիութիւնը սպառած էր այս այցելութեան միջոցին. գնաց ինկաւ նուազուն անկողնին վրայ եւ մնաց անզգած մէկ երկու ժամ. այնքան ուժաթափ զգաց ինքզինքն թափելէն վերջըն որ անկողնոյն մէջ անգամ չ'էր կրնար շարժիլ:

Գիշեր էր արդէն, փոքրիկ Հրանտն հեղիկ կը ննջէր իւր խշտեկին մէջ, եւ Արմի-



նէ կը դիտէր անոր սիրելի ոսկեգանգուր գլուխը զոր լուսնոյ մեղամաղձիկ շող մ'ողողած էր : Անսիրտ կինն աստիճան մը զղջացած էր ըրածին . կը խորհէր թէ՛ եթէ այն տաժանելի հիւանդ թիւնն որ փոքր առ փոքր հիւժած էր իւր մարմինն՝ եւ որով նոյն պահուն առաւել քան երբէք կը չարջարուէր, յանկարծ գահավիժէր զինքը մահուան գիրկը, յայնժամ ի՞նչ պիտի ըլլար իւր գաւազը, ո՞վ օգնական աջ պիտի կարկառէր անոր . ոչ ոք, յոյս չկար մեծ հօրմէն, եւ անկից զատ ոչ մէկէն կրնար յուսալ : Այդ իւր արտասուօք սնուցած վարդի կոկոնին պիտի միաթթուէին թո՛ղնաւոր իժեր եւ կիսամերկ տղմերուն մէջ պիտի անցնէր՝ նա իւր գիշերները, ցուրտէն գալարած՝ ձեռքերն անուշադիր անցորդաց երկնցներով : Մէկ երկու ժամ այսպէս մտածելով անցուց Արմինէ . հրաժառ տենդ մը դժոխային բոցի պէս կ'այրէր իւր գլուխն եւ աչերուն արտասուքը կը ցամքեցնէր . մէկ մ'ալ յանկարծ արշաւասոյր ձիւ մը ոտնաձայնն իւր ուշադրութիւնը գրաւեց . վայրկեան մը վերջը տնակին դուռը զարնուեցաւ մեղմիւ . «Մտէք, ըսաւ խեղճ հիւանդը, դուռը բաց է :» Արմինէ գողէ վախ չունէր, ոչ ալ չարագործէ . ոչ ոք կ'երթար այդ հէք տնակին մէջ հարստութիւն փնտռել, մանաւանդ որ չըջակայ տնակները բնակողները բարի ձըլնորսներ էին որք յաճախ իրեն օգնութեան կուգային : Նարկիսիսը յետոս մղուեցաւ զգուշութեամբ եւ վայելչակազմ երիտասարդ մ'երեւցաւ սեմին վրայ . նոյն պահուն լուսնին յստակ լոյսը կը թափանցէր խրճիթէն ներս, ու կը լուսաւորէր այն հէք մայրն ու սիրուն մանկիկն, որք սըրտաշարժ հակապատկեր մը կ'ընծայէին . մին առողջ վարդապետը ու ոսկեհէր կը ներկէր ժպտուն . միւսն՝ կմախքի պէս նիհար, մեռելատիպ ու նուաղուն, արմուկին կըրթնած, ակօսացեալ աչերով գէպի դուռը կը նայէր : Մին լուսածիծաղ պատկերն էր կենաց, միւսը սգաստուեր պատկերը մահուան :

Նորեկը զանոնք դիտելով վայրկեան մը մնաց անշարժ, կարծես չէր համարձակեր ներս մտնել :

— Ո՞վ կը խնդրէք, հարցուց Արմինէ զարմացած, կարծեմ սխալած ըլլալու էք :

— Ո՞վ կը խնդրեմ, դոչեց երիտասարդը սաստիկ յուզեալ . Արմինէն կը խնդրեմ....., սիրեցեալ կինս Արմինէն..... :

— Երուանդ..... հեկեկեց մանկամարդ կինն ու նուաղեալ ինկաւ անոր բազկացը մէջ : . . . . .

Նայն օրն իսկ դարձած էր Երուանդ Եգիպտոսէն . իւր մօրեղբօր գործերը յոյժ կարգադրեալ վիճակի մէջ էին : Նորա հարստութիւնն իւր տրամադրութեան ներքեւ էր, վաճառատուն մը բացած էին յԵգիպտոս, վաճառատուն մ'ալ պիտի բանային ի Պոլիս, անոնց երկուքին ալ շահը Երուանդինը պիտի ըլլար եւ ինքն ուր որ ուզէր հոն պիտի բնակէր, տարին մէկ քանի անգամ երթալ մօրեղբայրը տեսնելու պայմանաւ :

Այժմ հարուստ էր Արմինէի այրը, պէտք եղածէն աւելի հարուստ : Իւր բազմաթիւ զրազմանց մէջ՝ երբէք չ'էր մոռցած նա իւր կինն ու որդին . յուսալիւ նամակներ դրած ու ստակ ուղարկած էր անոնց, աղաչելով որ քաջութիւն ունենան մէկ երկու շաբաթ իրեն սպասելու : Սակայն անխելութիւն մը ըրեր էր նա նամակներն ու ստակը իւր հօր գործատունը զրկելով, դրադիրներէն միոյն, քանզի հայրն իմացեր էր այդ բանն եւ խստիւ արգիլէր էր զանոնք իրենց հասցէին հասցնելն : Այսպէս Արմինէ՝ անօթութեանէ մեռնելու դատապարտուած էր առանց իւր տնտեսնոյ գիտակցութեան : Երուանդի գալուստէն մէկ երկու օր առաջ՝ իւր հայրն իմացեր էր անոր պատահած բարեբաղդութիւնն, եւ երբ այս լուրը հաղորդէր էր իւր կնոջ, իսկոյն անհոգի արարածը մտաբերեր էր Արմինէն իրենց տունն առնել եւ այսպէսով Երուանդի սրտմտութիւնը մեղմել ու մասնակցիլ անոր հարստութեան . այլ այս յոյսն ի դերեւ հանած էր նորոտի կնոջ իրաւացի կամակորութիւնը :

Երուանդ Պոլիս ոտք կոխածին պէս հօրը զրազիրը գտեր ու անկէ իմացեր էր եղելութիւնն . իւր առաջին մտածումն եղեր էր երթալ հօրմէն բացատրութիւն խնդրել, չլրնալով ըմբռնել թէ ի՞նչպէս հօր մը վրէժխնդրութիւնն սոյգ աստիճան յառաջ կրնայ երթալ . սակայն աւելի նուիրական պարտք մը զինքն իւր կնոջ մօտ կը կոչէր . ուստի ամեն բան թողնելով զիմեր էր



դէպի այն հրեշտակային արարածն՝ որ իրեն համար թշուառութեան բաժակը մինչեւ ցմրուր քամել յօժարեր էր :

Իւր տեսակ հակառակ մտածմունք իւր միտքը կը պաշարէին, մինչ գլխիկոր կը դիմէր դէպի Թ..... գիւղի իրենց խրճիթը : Խնչ եղած էր Արմինէ այն երկու ամսուան միջոցին . միթէ զայն հիւծող սեւ ախտը աւարտած էր իւր տխուր պաշտօնը, միթէ հոն՝ այն սիրելի բնակութեան մէջ, ողջ առողջ իրեն կ'սպասէին մայր ու մանկիկ . չէ թէ անոնց տեղ իւր դէմը պիտի ելլէր դաւար հողակոյտ մ'որու վրայ տարածեալ պիտի գտնէր իւր սիրելի Հրանտը, կիսամերկ ու ցրտահար, նօթութենէ նուաղուն : Խեղճ երիտասարդը մերթ կանգ կ'առնէր սրտին բաբախումները զսպելու եւ այս սգաստուեր նախազգացումներն իրմէ հեռու վանելու համար : Վերջապէս հասաւ այն անձկալի վայրը, դառաւ կինն ու զաւակը, մին ողջ առողջ, այլ միւսն... աւա՛ղ... օրհասին մօտ :

Ո՛չ բժիշկ, ո՛չ խնամք՝ չխնայուեցան անոր, այլ արուեստ ու աղօթք չկարողացան ետ դարձնել ճակատագրին անջինջ հրամանը : Երկու օր վերջն Արմինէի յուզարկաւորութեան հանդէսը կը կատարուէր արտասովոր շքեղութեամբ . բարձրագոյն ընկերութեան գրեթէ բոլոր անդամք հոն ներկայ էին . ծաղրելի՛ մարդասիրութիւն . ամենքն ալ սեւազգեստ ու տխրադէմ . շատեր կը ջանային մխիթարել զերուանդ, բայց նա խուլ էր ամէն մարդկային ձայնի :

Աշխարհ իրեն համար ողորմելի աւերակաց կոյտ մ'էր, որ դանդաղ կը դառնար իւր առանցքին վրայ, եւ այդ աւերակաց մէջէն յուսահատութեան սեւ հրեշտակը կը քաշէր իւր թեւէն, ինքն ալ յօժարակամ կը հետեւէր անոր, աչացն առջեւ ունենալով միշտ պատկերն այն տարածամ թառամեալ ծաղկին, որոյ հազուադիւտ առաքինութիւնք ու երկնածիր յատկութիւնք, ուրիշ վարձատրութիւն չ'էին գտած երկրիս վրայ, բայց միայն հոյակապ շիրիմ մ'անուշաբոյր ծաղկամբ ողողուած եւ անմխիթար ամուսնոյ մ'արցունքովն ոռոգուած..... :

ԱՆԱՅԻՍ

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

### ՀԱՐՑ Մ'ԱՌ ԿՈՑՈ

Կոյս սիրասուն, է՞ր չ'սիրես,  
Երբ քոյ սէրն կեանք է միշտ,  
Երբ կը ցրուէ ցաւը ու վիշտ .

Սիրէ՛, գեղոյշ,  
Սէրդ է անոյշ :

Կոյս քաղցրաձայն, է՞ր չ'ոգես  
Թրթուուն ձայնիւդ գեղունակ,  
Ոսկի մատամբ ի դաշնակ .

Երգէ՛, գեղոյշ,  
Երգդ սիրանոյշ :

Կոյս ժամագեղ, է՞ր չ'ժպտես,  
Երբ ժպտանօքդ կարես  
Որ սիրտք ոգիք բեզ գերես .

Ժպտէ՛, գեղոյշ  
Ժպիտդ մեղոյշ :

Է՞ր վերջապէս աչերու բոց  
Ի մի հայեացդ չ'մարի,  
Այլ բորբոքի յոյժ կարի .

Ըսէ՛, գեղոյշ  
Ո՛ր քնքոյշ :

Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Պօլես

## ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐԻ

|     |     |                  |
|-----|-----|------------------|
| Թիի | 6.  | (Մասիս թիւ 3798) |
| »   | 9.  | » » 3801)        |
| »   | 10. | » » 3802)        |
| »   | 11. | » » 3803)        |

ԽՆԴԻՐ

Թիի 12.

Մարդ մը որուն կը հարցուէր իւր եւ իւր կնոջ



տարիքները, կը պատասխանէր. Նախ, կինս երկու տարեք տարիքներ ունի, մին՝ զոր կ'ըսէ եւ երկրորդ մը՝ զոր կը պահէ ամենէն. եթէ առաջինն առնենք ի հաշիւ, մեր երկուսին տարիքներու գումարը՝ իւր  $\frac{1}{10}$  ին եւ աւելի 3 տարւոյ չափ կը նուազի: Ըստ ինձ, քանի մը տարեկան իրմէ աւելի փոքր եմ: Ըսոյց թէ որ իրեն հարցնէք, ես իրմէ նոյնքան աւելի մեծ ըլլալու եմ: Ճշմարտութիւնը սա է թէ, եթէ իմ տարիքս  $\frac{1}{7}$  ւ անոր տարիքին  $\frac{2}{9}$  ու բաղմապատկելու ըլլաք, ճշդիւ կ'աւանդաք այն տարիքը որուն խօսքը ընելէ կ'զգուշանայ կինս:

Ի՞նչ են ամուսնոյն եւ կնոջ տարիքները: —

### Խ Ն Դ Ի Ր Թ Ի Ի 8

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ Ն

Դիտենք նախ թէ երկուքին ցուցած ժամերու տարբերութիւնն է 110 վայրկեան. երկրորդ՝ թէ ժամացոյցերուն մին, ժամուան մէջ 5 վայրկեան ետ մնալով եւ միւսը 6 վայրկեան յառաջանալով, բնականաբար իւրաքանչիւր ժամուան մէջ 11 վայրկեան կը մերձենան երկու ժամերը որով եւ  $\frac{110}{11} = 10$  ժամէն երկու ժամացոյցերն ալ մի եւ նոյն ժամը պիտի ցուցնեն:

Արդ, յայտնի է թէ առաջին ժամացոյցը այս 10 ժամերու միջոցին 10 ժամ-50 վայրկեան այսինքն 9 ժ. եւ 10 վ. յառաջացած է: Ուրեմն պիտի ցուցնէ.

|        |             |
|--------|-------------|
| 12 ժամ | 20 վայրկեան |
| 9    » | 10    »     |
| 21   » | 30    »     |

ինչ որ ըսել է ժամը երեկոյեան 9  $\frac{1}{2}$  ր:

Նոյնպէս երկրորդ ժամացոյցը, 10 ժամուան միջոցին յառաջացած է 10 ժամ եւ 60 վայրկեան, այսինքն 11 ժամ: Ուրեմն պիտի ցուցնէ

|         |             |
|---------|-------------|
| 10 ժամ  | 30 վայրկեան |
| 11    » | —           |
| 21   »  | 30    »     |

այսինքն ժամ 9  $\frac{1}{2}$ :

Արդ, խնդրոյն նայելով, սոյն ժամը (9  $\frac{1}{2}$ ), ճշմարիտ ժամէն  $\frac{1}{4}$  ժամ մ'աւելի է. որով ճշմարիտ ժամն է 9  $\frac{1}{4}$ , իսկ խնդրուած ժամը, ասկէ 10 ժամ առաջուանն է, այսինքն

$$9 \frac{1}{4} - 10 \frac{1}{4} = 11 \frac{1}{4}$$

Պատ.— Սոյն միջոցիս ժամը առաւօտեան 11  $\frac{1}{4}$  ն է:

### ԱՆՈՒԱՆՔ ԼՈՒԾՈՂԱՅ

Տ. Կ. Նաւասարդեան, Իզմիր  
Օր. Մ. Զօհրապ, Գատը-զիւղ  
Տ. Տ. Ա. Աղասեան, »

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

#### ԴՈՒՍԻԱ ԵՒ ՊԱՐՈՒՍՏԱՆ

Ռուսօ — պարսկական սահմանադրւոյն վրայ խռովութիւնք ծագած են:

Ի սկզբան առնուած լուրեր կը ծանուցանէին թէ ապստամբութիւն ծագեր է Խօրասանի մէջ, վասն զի Շահին եղբայր եւ այդ գուառի կառավարիչ՝ Պուքն-էլ-Տաուէ Մոհամէտ Թաքի Միրզա՝ փորձեր է տըրոց յաւելում մ'ընել: Խռովարարաց պետերէն մին ապստամած լինելով Խմամ Րիզայի դամբարանին մէջ, կառավարիչն այդ նուիրական յարկին տակ ձերբակալել տուեր է զայն, հակառակ կրօնականաց բողոքներուն: Այս ծայրայեղ խստութիւն ժողովրդեան զայրոյթն եւս առաւել գրգռեր է: Մինչեւ իսկ Թէհրանի մէջ զրոյց ելեր է թէ կառավարիչն սպաննուած է, եւ որովհետեւ ձմրան սաստկութեան պատճառաւ հեռագրական հաղորդակցութիւնք խզուած էին, պահ մը մեծ անձկութիւն տիրեր է Շահին արքունեաց մէջ: Ի վերջոյ իմացուեր է թէ այս լուր անհիմն է: Այսու հանդերձ կեդրոնական կառավարութենէն հեռագրուեցաւ ի Մէշէտ, թէ Խմամ Րիզայի դամբարանին անբռնաբարելութիւնը պիտի յարդուի: Այս ապահովութիւն հանդարտեցուց գրգռեալ մտքերն եւ խաղաղութիւնը վերահաստատեցաւ. կը վախճուի որ խռովութիւնք վերստին արծարծին, եւ թէ Պուքն-էլ-Տաուէ Խօրասանի կառավարչութեան պաշտօնին վրայ մնայ:

Միւս կողմէ, Դաւթ-ժէն Տէյլ-Նեշլի ուղղեալ հեռագիր մը կը յայտնէ թէ Անգլիոյ վկայական սահմանադրւոյն մօտ կ'ուր



մը տեղի ունեցեր է ընդ մէջ Ռուսաց եւ Պարսից :

Պարսկական, թափառաշրջիկ ցեղ մը՝ իբր 6,000 հոգիէ բաղկացեալ, Ատրպատականի (Պարսկաստան) դաւառէն Անդրկովկասու Մօկան քաղաքը կ'ուղեւորէր . Ռուսք ուղեցին արգելուլ այս գաղթականութիւնն , Պարսիկը ընդդիմացան եւ ճակատամարտ մը ծագեցաւ : 80 է աւելի Պարսիկներ վիրաւորեցան եւ քանի մը հարիւր հոգի մեռան : Իսկ Ռուսաց կողմէն 16 Խաղախք մեռած են եւ 50 ի չափ ալ վիրաւորուած : Ռուսական հրամանատարն իրողութիւնն հեռագրելով անմիջապէս Անգլիոյ վասի կառավարչապետին , զինուորական օգնութիւն խնդրեց :

Այս ծանրակշիռ դէպքերուն պատճառաւ մեծ մտահոգութեան մէջ է Շահին կառավարութիւնը , վասն զի անկարելի չէ որ Ռուսք պատրուակ բռնեն այս կռիւն եւ Խորասանի ապստամբութիւնը՝ Պարսկաստանի գործոց միջամտելու առիթ մը գլուխէլու համար : Թէհրանի կառավարութիւնն հրամայած է որ պէտք եղած թուով զօրք ղրկուին ի Մէշէտ եւ յԱտրպատական :

Այս առթիւ Լոնտոնի Կլօք լրագիրը կ'ըսէ թէ անտարակոյս Շահը պատուոյ հատուցում պիտի տայ իւր հպատակաց յարձակողական եւ պարսաւելի ընթացքին համար , եւ որովհետեւ Ռուսիա յանդուս գործնական պետութիւն մ'է այսօրինակ գործոց մէջ , հաւանական է որ նախամեծար համարի սահմանազլխոց ճշդման խնդիր մ'երեւան հանել քան պահանջել որ ներողութիւն խնդրուի իրմէ : Ահմանագլխոյ երկու կէտեր կան՝ Ատրպատականի դաւառին մէջ , Կասպից ծովու դէպ ի արեւմտեան կողմն , եւ Խորասանի դաւառին մէջ , դէպ ի արեւելք , որոց երկար ժամանակէ հետէ աջք տնկած է Ռուսիա : Մինչեւ մօտ ժամանակներս , այս կէտերու առաջինը Ձարին կառավարութեան թեկնածութեանց միակ առարկայն եղած լինել կը թուէր , վասն զի կը կարծուէր թէ Ռուսիա կը փափագի եւ կը նկրտի ձեռք ձգել Կասպից ծովու ելեքը տարածուող հողերը . նորագոյն դէպքեր ցոյց տուին թէ ամենէն աւելի Խորասանի դաւառին աջք ունի Ռուսիա :

Եւ ինչո՞ւ համար , կը հարցնէ անգլիա-

կան լրագիրը : — Երկու պատճառաւ : Նախ որ այդ քաղաք , Հէրադի կողմէն , այնպիսի դիրք մ'ունի որ ռազմագիտական ամենամեծ կարեւորութիւն կ'ստանայ այն պարագային յորում Ռուսիա ուղէ գրաւել արեւմտեան Աֆղանստանն : Վերջերս ծանուցուեցաւ թէ Շահէն արտօնութիւն խնդրուած է անդրկասպեան երկաթուղոյ ճիւղ մը հաստատել Մէշէտի վրայ : Եթէ այս արտօնութիւն չնորհուէր , Ռուսիա իւր տրամադրութեան ներքեւ պիտի ունենար երկաթուղոյ ուղղակի հաղորդակցութիւն մը ընդմէջ Կասպից ծովուն եւ Աֆղանստան մեծ ամրոցին : Այսու հանդերձ , միշտ ըստ Կլօքի , Ռուսիոյ համար ուրիշ պատճառ մը եւս կայ որ շատ աւելի կարեւորութիւն ունի յայտ Անգլիոյ : Ռուսիա իւր բոլոր ջանքը կ'ընէ Պարսկաստանի հողէն անցնելով մինչեւ ծով հասնելու համար , արդ , եթէ կարենայ ձեռք անցունել զՍորասան , ճանապ մը պիտի ունենայ իւր առջեւ դէպ ի Հնդկաց ծովն , եւ եթէ Անգլիա փորձէ դիմադրել այդ ուղեանոսին մէջ ռուսական նաւահանգստի մը հաստատման , Ռուսիա կրնայ Հէրադի ըսպառնալ Մէշէտի միջոցաւ :

Թողով սակայն անգլ. լրագրոյն քաղաքական նկատումներն . եւ եթադրութիւնները , սա ակնհերեւ է թէ Ռուսիա ո'չ միայն զինուորական տեսակէտով յառաջ կը քալէ դէպ ի Կեդրոնական Ասիա , այլ նաեւ առեւտրական շահուց տեսակէտով . առեւտրական գործակատարք մօտանց կը հետեւին միշտ ռուս բանակաց , զարգացնելու եւ ռուսական ճարտարարուեստից ընտելացնելու համար արտագրութիւնքն այն երկիրներու զորս հիւսիսային մեծ Պետութիւնը կը գրաւէ կամ հետամուտ է գրաւելու . կառավարութիւնն ալ իւր կողմէ ոչինչ կը խնայէ քաջալերելու համար անհատից ջանքերն , եւ եթէ ստուգապէս կարելի չէ գուշակել այն ասպագայն որ վերապահուած է կառավարութեան եւ անհատից այս միացեալ ջանքերուն , գէթ զըժուար չէ գաղափար մը կազմել ցարդ ձեռք բերուած արդեանց վրայ .

Ռուսական շահագործման առարկայ եղող երկիրներն են , բաց ի այն ռուսական ստացուածներէ , որք Կեդրոնական Ասիա



ընդհանուր անուամբ ճանչցուած են, Պարսկաստան եւ Պոլսարա :

Պարսկաստանի մէջ, որոյ վրայ միայն կը խօսինք այժմ, ռուսական վաճառականութիւնն զգալապէս զարգացած է 1882 էն ի վեր, յորում Անդրկովկասի ճանքով Ներսիսիոյ ապրանաց փոխադրութիւնն արգելուեցաւ . այս տնօրինութիւն սա կրկին արդիւնքն ունեցաւ որ Մոսկուայի վաճառականը իրենց ապրանաց սպառման մեծ աւարտէզ գտան ի Մէրվ, յԱֆղանստան, Թիւրքիստան, եւ միանգամայն միջոց ունեցան Պարսկաստանի հիւսիսային կողմերը միջիլ անգլիացի կամ գերմանացի վաճառականաց հետ որք ցայն վայր գրեթէ առանձինն կը մատակարարէին այդ գաւառաց պիտոյքը :

1884 ին, Ռուսիայէն Պարսկաստան ղըրկուած ապրանաց գումարը կը հասնի 3 միլիոն 526,000 ռուբլի (շուրջ 15 միլիոն ֆրանք) . այս գումարի 1,271,000 ը բամպակեղինաց յատկացեալ է : Նոյն թուականին, Տրասպիզոնի ճանքով Պարսկաստան ղըրկուած եւրոպական ապրանաց գումարը կը հասնի 8,222,598 ռուբլի, մինչ 1885 ին 7,670,000 ռուբլի էր : Ներսիսիոյն պարսկական հողը ղըրկուած ապրանաց մէջ առաջին տեղը կը գրաւէ Անգլիա՝ որ այդ մէկ տարւոյ մէջ ղըրկած է 4,401,705 ռուբլի ապրանք . ապա կուգան Գերմանիա եւ Աւստրիա՝ 854 հազար 350 ռուբլի, Ֆրանսա՝ 450,101 եւ Զուիցերիա 120,000 ռուբլի ապրանք :

Կարելի չէ ապահովել այս թուանշաններու կատարեալ ճշգրտութիւնը, վասն զի ռուսական աղբիւրէ քաղուած են եւ կրնան շատ անգամ տարբերիլ անգլ. հիւսկադատաց տեղեկագրութիւններէն : Իրողութիւնը սա է միայն թէ ռուսական վաճառականութիւնը մեծապէս կը ծաւալի ի Պարսկաստան . այս ծաւալում կը վերագրուի Պաքիստանի նաւահանգստին օր աւուր ստացած կարեւորութեան (ըստ որում Կասպից ծովու մթերանոցը կը դառնայ այն) եւ միանգամայն գինուորական աշխարհակալութեանց յառաջդիմութեան : պէտք չէ մոռնալ նաեւ այն աղբեցութիւն զոր Պարսկաստանի եւ Ռուսիոյ առեւտրական յարաբերութեանց վրայ ունեցած է՝ եւրոպական ապրանաց Անդրկովկասու ճանքով ի

Պարսկաստան առաքման մասին ղըրուած արգելքն :

Ձեռք կարող, եւ տեղն ալ չէ աւելի մանրամասնութեանց մէջ մտնել խնդրոյ մը վրայ որ ղինուորական տեսակետով օրուան կարեւորութիւնն ստացած է այս պահուս . իսկ առեւտրական տեսակետն իբր յարակից պարագայ մը միայն ուշադրութեան արժանի կը նկատուի : Պարսկական սահմանագլխոյն վրայ ծագած խռովութիւնը այն կարգի իրողութիւնը են որք կրնան առիթ ընծայել Ռուսիոյ իրագործել ինչ ինչ քաղաքական խորհուրդներ՝ ի վաղուց յղացուած, ռուսոմնասիրուած . բայց թէ այդ իրականացում ներկայի՞ գործ է թէ մօտաւոր ապագայի մը, դժուար չլինիր որոշել զայդ, սպասելով նորագոյն լրոց որք անշուշտ պիտի յայտնեն թէ Ատրպատականի միջադէպը փակուած է կամ ընդհակառակն ծանր երեւոյթ եւ քաղաքական կարեւորութիւնն ստացած է, որպէս կը գուշակէր Կլեյ :

## Ք Ա Ղ Ո Ի Ա Ն

ՆԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

4-10 ՅՈՒՆՈՒՍԻ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

—o—

Անգլիոյ Պատերազմական նախարար Պ. Սմիթ Իւլանտայի ընդհանուր քարաուղար անուանեցաւ : Կը կարծուի թէ Լորտ Գարնալոն (հրաժարեալ փոխարքայ Իւլանտայի) գաղթականութեանց և գնդապետ Սլանլի՝ պատերազմական գործոց նախարար պիտի անուանին :

—Տեյն Թէէէրֆ հեռագիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ Ռուսիա բաղմաթիւ զօրք կը ղրկէ Թիւրքիստան :

—Թագուհին յուն, 9/21 ին անձամբ բացաւ Խորհրդարանի նոր նստաշրջանը : —Արքայական ճառը կը ծանուցանէ Պիլմանիոյ դրաւումը . — Բացորոշապէս կը մերժէ ո և է բռնաբարում զիրլանտան Անգլիոյ միացնող հիմնական օրինաց . — Յաւ կը յայտնէ Իռ-



լանտայի մէջ տեղի ունեցած վերջին դէպքերուն վրայ. ի հարկին պիտի դիմուի բացառիկ օրինաց. — Խօսելով Ղազի Մուսթար փաշայի և Սըր Հ. Տ. Ուոլֆի պաշտօնին վերայ յԵգիպտոս, Թագուհին կ'ըսէ թէ այդ Գոմիսէրը անուանուած են Խտիվին հետ խորհրդակցելու և տեղեկագիր մը պատրաստելու այն տնօրինութեանց վրայ որը հարկաւոր են Եգիպտոսի պաշտպանութիւնն և եգիպտական կառավարութեան հաստատութիւնն և ազդեցութիւնն ապահովելու :

Աւասիկ Թագուհւոյն ճառին այն մասն որ Արեւելեան Բումէլիի կը վերաբերի :

«Արեւ. Բումէլիի մէջ ապստամբական շարժում մը բնակչաց կողմէ փափաք յայտնելով որ Պէրլինի դաշնագրին իրենց համար դրած քաղաքական կարգադրութիւնները փոխուին՝ բանակցութեանց մէջ իմ նպատակս եղաւ ըստ իրենց բաղձանաց դնել զայնս Պուլկարիոյ իշխանին կառավարութեան ներքեւ, անվթար պահելով, Վեհ. Սուլթանին էական իրաւունքներն :

—Սերպ կառավարութիւնը պատասխանեց Մեծ տէրութեանց հաւաքական ծանուցագրոյն ի մասին գէնընկեցութեան, բացորոշապէս յայտարարելով թէ պալքանեան թերակըղզոյն մէջ իրաց ներկայ վիճակին առջեւ, բացարձակապէս անհնար է իրենց ցրուել տալ իւր զօրքերը :

—Ֆրանսայի Հանրապետութեան նախագահին պատգամագիրն շնորհակալ կը լինի Խորհրդարանին՝ իւր վերընտրութեան համար. — կը պնդէ ձախակողմեանց միացման վրայ. — կը հաստատէ թէ Հանրապետութեան կառավարութիւնն Եւրոպիոյ բարձր համարումը կը վայելէ. — ի վերջոյ կ'ըսէ թէ Ֆրանսա այս վերջին տարիներս նպաստած է խաղաղութեան պահպանման յԵւրոպա :

—Երեսփոխանաց ժողովը և Մերակոյտը ջերմապէս ծափահարեցին նախագահական պատգամագիրն, մանաւանդ այն հատուածներն որը կը յանձնարարեն նախարարութեան կայունութիւնն և կը հաստատեն թէ Ֆրանսա իւր տեղը վերստացած է Եւրոպիոյ խորհրդոց մէջ :

Պ. լը Ռուայէ նախագահ վերընտրեցաւ Մերակոյտին :

—Ֆրանսայի և Մատակասգարի դաշնագիրը վաւերացուեցաւ Խորհրդարանէն :

—Նախարարական յայտարարութիւնն յուն. 4/16ին կարգացուեցաւ միեւնոյն ժամանակ Մերակոյտին և Երեսփոխանական ժողովոյ մէջ :

« Յայտարարութիւնը կոչում կ'ընէ հանրապետական կուսակցութեան ամեն խմբակներուն միացման. — կը խնդրէ բոլոր պաշտօնատարաց հաւատարիմ աջակցութիւնը. — Եկեղեցւոյ և Պետութեան բաժանման խնդիրն հասունցած չէ, սակայն կղերն, եթէ կ'ուզէ որ յանկարծուստ չխզուին ամեն կապեր, պարտի իւր պաշտօնի սահմանէն դուրս չ'ելնել. — Ելնողոյցին հաւասարակը ռութիւնը պիտի վերահաստատուի առանց փոխառութեան, խնայութեանց և տրոց վերակազմութեան միջոցաւ. — Ֆրանսայի արտաքին աշխարհավարութիւնն իրեն արժանի և խաղաղ պիտի լինի. — Մեր ոյժերը պիտի կեդրոնացնենք մեր երկրին մէջ, որպէսզի յարգուինք առանց ոչ ումեք սպառնալու. — Ս. յլ ևս չենք ուզեր հեռաւոր արշաւանքներ, այլ պիտի պահենք մեր ձեռք բերած ստացուածքներն, անոնցմէ՝ քաղելով լաւագոյն օգուտն և թեւարկութիւններ կազմակերպելով յ'Աննամ, ի Թոնքին և ի Մատակասգար : »

—Պաշտօնական գեկոյց մը կը հերքէ Գարատաղի սպառազինման զրոյցներն և հաստատ յոյս կը յայտնէ խաղաղութեան պահպանման : Ար հաստատէ թէ Գարատաղի իշխանին յիտալիա և ի Ֆրանսա ուղեւորութեան միակ նպատակն է ուսումնասիրել գիտութեան և ճարտարութեան յառաջդիմութիւններն, որք կրնան ի գործ դրուիլ Գարատաղի մէջ :

—Ժոնալ Դը Ս. Բեդերպուս-ը խօսելով Սերպիոյ և Յունաստանի մերժողական պատասխաններուն վրայ ի մասին գէնընկեցութեան, կ'ըսէ թէ տէրութիւնը պիտի կըրկնապատկեն իրենց ջանքերն Սերպիոյ, Յունաստանի և Պուլկարիոյ բով, ցրուել տալու համար զօրքերն :

« Եւրոպիոյ արժանապատուութիւնը, կ'ըսէ Ժոնալ, և անհաշուելի աղետից առաջն առնլու պէտքը կը պահանջեն զայս : »

—Յունուար 14ին, Պ. Ժ. Կրէվի, իւր վերընտրութեան առթիւ, ընդհանուր ներում շնորհեց քաղաքական և



լրագրական լանցանայ համար բան-  
տարկուած անձերուն, և պատժոյ թե-  
թեւացում շնորհեց կարգ մը հասարակ  
եղեւնագործներուն : Ռուս անիշխանա-  
կան իշխան Բրափոգքին և յեղափոխա-  
կանուհի Տիկին Լուիզ Միշէլ ևս ազա-  
տեցան բանտէն : Տիկին Լուիզ Միշէլ  
1883 մարտ 23ին բանտարկուած էր ,  
Բարիզի մէջ հացագործներուն խա-  
նութիւնը կոխող և աւար առնող ան-  
իշխանական գործաւորաց գլուխ հան-  
դիսանալուն համար : Հնգամեայ բան-  
տարկութեան դատապարտուած էր ,  
որով աւելի քան երկու տարւոյ պա-  
տիժ կը ներուի իրեն :

### Ն Ե Ր Ք Ի Ն

—o—

Էֆքաֆին Նախարար Սուպհի փաշա՝ որ  
մէկ քանի ամսէ ի վեր դառն հիւան-  
դութեամբ մը կը տառապէր, անցեալ  
շաբաթ գիշեր մեռաւ Պոլիս, Հօր-Հօր  
թաղն, իւր ապարանքին մէջ : Յուդար-  
կաւորութիւնն արժանաւայել շքով կա-  
տարուեցաւ կիրակի օրն, ի ներկայու-  
թեան Բարձր. Շէյխ-իւլ-իսլամ Էֆէն-  
տիին, Սէրվէր, Հագգը, Ասիմ, Մուս-  
թաֆա, Մահմուտ, Հասան Ֆէհմի փա-  
շաներու, ոստիկանութեան նախարար  
Բեումիլ պէյի, պատկական դեսպան  
Մոհսին խանի, և այլ երեւելեաց և խուռն  
բաղմութեան : Հրամանաւ վեհ. Սուլ-  
թանին, մարմինն ամփոփուեցաւ Սուլ-  
թան Մահմուտի Թիւրպէին կից դրա-  
նուած դամբարանին մէջ :

Սուպհի փաշա՝ որ երկար ժամանա-  
կէ հետէ պետական այլ և այլ պաշ-  
տօններ և կարեւոր գաւառաց կուսա-  
կալութիւններ վարած էր, 72 տարեկան  
էր և կը թողու քսան երկու զաւակ  
որք մեծ մասամբ մայրաքաղաքս կը  
գտնուին :

Սուպհի փաշա իւր կենդանութեան  
ժամանակ ինքնագիր նամակ մը և  
քանի մը կտոր թանկագին հնութիւն-  
ներ թողած էր, իւր մեռնելէն յետոյ  
վեհ. Սուլթանին մատուցուելու հա-  
մար. այս հնութեանց մէջ կը գտնուի  
Իսլամաց Մարգարէի մատանին :

Սուպհի փաշա իւր կտակագիրն եւս  
պատրաստած և գործադրութիւնն յանձ-  
նած էր Շէրիֆ Էֆէնտիի : Այս կտա-  
կագրոյն համաձայն, հանգուցեալ նա-  
խարարի հարստութիւնն հաւասարա-  
պէս պիտի բաժնուի իւր բոլոր զաւա-  
կաց :

—Սաաթէլ լրագիրն՝ որ խափանուած է  
եպարքոսական հրամանաւ, վերստին  
հրատարակման հրաման պիտի ստանայ  
ի մօտոյ :

—Նեօլոլ կը ծանուցանէ թէ վեհ.  
Սուլթանը 12,000 շրուշ ամսաթոշակ  
յատկացուցեր է Արեւ. Բումէլի նա-  
խորդ կուսակալ Կավրիէլ փաշայի :

—Պուրկազէն կը գրեն առ Էսթէն,  
թէ Արեւելեան Բումէլիի ղինուորական  
հրամանատարք՝ որք ցարդ Փիլիպէի  
կեդրոնական կառավարութեան իրա-  
ւասութեան ներքեւ կը գտնուէին, այ-  
սուհետեւ ուղղակի Սոփիայի պուրկա-  
րական բանակի ընդհ. հրամանատարին  
իշխանութեան ներքեւ դրուած են :  
Այսպէսով բումէլիական բանակը կը  
դադրի ուրոյն հրամատարութիւն մ'ու-  
նենալէ և կը խառնուի պուրկար իշ-  
խանապետութեան բանակին հետ :

—Մանիքեօ Օթանիւլ կ'ըսէ թէ ռուսա-  
կան դեսպանատան կողմէ այս օրերս  
Բ. Դրան մատուցեալ ծանուցագիր մը՝  
որոյ վրայ շատ կը խօսուի՝ ոչ թէ Պալ-  
քանեան խնդրոյն կը վերաբերի, այլ Փո-  
քըր Ասիոյ վերաբերեալ խնդրոյ մը :



## Ա. Զ. Դ. Ա. Յ. Ի. Ն.

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Ծննդեան երկուշաբթի օրն հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց ի Մայր Եկեղեցի և քարոզ խօսեցաւ ի ներկայութեան խուռն բաղմութեան :

Միջօրէին, Պուլկարաց Գեր. Էկղարքն, Հռոմէական Հայոց Պատրիարք Գեր. Աղարեան Սրբազանի Փոխանորդն, և Ռուսաց դեսպանատան առաջին թարգմանն աղգ. Պատրիարքարան գալով, իրենց շնորհաւորութիւնները մատուցին առ Ս. Պատրիարք Հայրն և արժանավայել պատուովք ընդունուեցան :

Յունաց Պատրիարքական փոխանորդն՝ ընկերակցութեամբ Վարչութեան անդամոց միոյն և Բարու Քէհեանի Էֆէնտիի, յաջորդօրը Պատրիարքարան գալով, նախ Գեր. Փոխանորդ Հօր և ապա Ամեն. Ս. Պատրիարք Հօր ներկայացան և Ս. Ծննդեան առթիւ իրենց շնորհաւորութիւնները մատուցին : Յոյն պատգամաւորք մեկնելէ առաջ, ըստ սովորութեան, Մայր Եկեղեցի իջնելով աղօթեցին :

— Երուսաղեմի միաբան Գեր. Մամբրէ ու Սահակ նորապսակ եպիսկոպոսունք և Արթ. Արիտակէս վարդապետ շարթուս մեկնեցան մայրաքաղաքէս յերուսաղէմ :

Աւստիկ պատճէնն այն կանոնադրեալ երդմութիւն զոր վեհ. Մակար կաթողիկոս կարդացած է իւր Օծման միջոցին, դէպ արեւելք դառնալով :

Ես ի ներքոյ անուանեալս խոստանամ և երդնում յանուն Ամենակարողին Աստուծոյ, զի կամիմ և պարտեմ Ն. Կայսերական Մեծութեան՝ իմոյ իսկական և յատուկ Ամենողորմած Մեծի Թագաւորի և Կայսեր Ալէքսանդր Ալէքսանդրովի՝ ինքնակալին Ամենայն Ռուսաց և Նորին Կայսերական Մեծութեան Աթոռոյ Ամենայն Ռուսաց Օրինաւոր Ժառանգի Նիկողայ Ալէքսանդրովի ծառայել հաւատարմութեամբ և անկեղծօ-

րէն և յամենայնի հնազանդել, ոչ խնայելով առ այն զկեանս իմ ցյետին կաթիլ արեան իմոյ և ամենայն որ ինչ Նորին Կայսերական Մեծութեան Բարձր Ինքնակալութեան զօրութեան և իշխանութեան օրինադրեալ և օրինադրելի իրաւունք իցեն և արտօնութիւնք, ըստ չափու իմանալոյ իմոյ զօրութեան և հնարաւորութեան պահել և պաշտպանել և ամենայն զօրութեամբ դուն գործել ձեռն պատամատոյց լինել յամենայնի ի դէպս՝ որք Նորին Կայսերական Մեծութեան հաւատարիմ ծառայութեան և շահու Պետութեան վերաբերեցին, իսկ երբ իրազգաց եղց զկորստենէ և զվնասուց շահու Նորին Մեծութեան, ոչ միայն աճապարել ի յայտ ածել կոնսադոյն, այլ նա և ամենայն հնարիւք ջանալ խախտել զայնոսիկ, և զամենայն ինձ հաւատացեալ խորհուրդս պահել պնդութեամբ : Նա և զեղեալ ի վերայ իմ և զհաւատացեալ ինձ պաշտօնն վարել պարտ և պատշաճ եղանակաւ, ըստ խղճի մտաց իմոց և համաձայն այժմու ընդհանուր և առանձին սահմանադրութեանց այնպէս և համեմատ ժամանակէ առ ժամանակ յանուն Նորին Մեծութեան յիմ վերայ նշանակեալ իշխանաւորաց արձակեալ հրովարտեալ և հրամանաց : Իսկ վասն շահասիրութեան, աղգակցութեան, բարեկամութեան կամ չարակամութեան չընթանալ ընդդէմ պարտաւորութեան իմոյ և երդմանս և վարել այնպէս, որպէս պատկանաւոր և բարեվայելն է հաւատարիմ հպատակի Նորին Կայսերական Մեծութեան, և որպէսզի կարացից ես յայնմ ամենայնի տալ պատասխանի առաջի Աստուծոյ և ահեղ դատաստանի նորա, առ որ ինքնին Տէր Աստուած կարողացուցէ զիս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ : Ի կնիք երդմանս համարեմ զբան և զխաչ Փրկչին իմոյ : ամէն : Ի 10 Նոյեմբերի 1885 ամի ի Ս. Էջմիածին :

Ըստ այսմ երդմանաթղթոյ երդուայ .

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Երդմանեցուցի Կառավարիչ Թեմին

Հայոց Արքայապ

ԳՐԻԳՈՐ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻԼ ԼՐԱԳՐՈՅ